



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2617

2618

2619

2620

52

b-84

2010

Մ. Յ. ԽՏՇԵԱՆ

891.99

ՔԱՐԻՔ ԳԱՍՏՐՈՒՄ

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՓՈՐՁԵՐԸ

Ա.

ՏԱՐՕՐԻՆԱԿ ԿԷՊ ՄԸ

ԼԷՆ

Ի Ջ Մ Ի Ր

ՏՊԱԳՐ. ՄԱՍՈՒՐԵԱՆ

1909

3n

U. S. PATENT OFFICE

OFFICE OF THE COMMISSIONER OF PATENTS

WASHINGTON, D. C.

15856-58.
32042-U. S.

(2630)
41
15856-58

U. S. PATENT OFFICE
WASHINGTON, D. C.

U. S. PATENT OFFICE

DEDICATED BY THE AUTHOR
TO
Dr JOHN D. QUACKENBOS
AS AN EXPRESSION
OF HIS HIGH ESTEEM AND PROFOUND
ADMIRATION

2060100

PROF. JOHN S. QUACKENBOS

PHILADELPHIA

QUACKENBOS & COMPANY



Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն



Մեր ազգին հոգեբանութիւնը ուսումնասիրողներ
դիտած են որ հայերը գերազանցապէս զգայնամոլ եղած
են: Այս ձգտումն է եղած իր դժբաղդութեան գիտաւոր
աղբիւրը:

Արդ՝ հեղինակը ներկայ եւ հետգիտէ յաջոր-
դելիք վեպերով ջանացած է մտային այս դժբաղդ
ուղղութիւնը դարմանել. ընթերցողին միտքը՝ սասիճա-
նաբար շուրջ խորհողութեան առաջնորդելով հաճելի
ընթերցումի մը անզգայի ազդեցութեան սակ:

Ա. 3. Խ.



ԲԱՐԵՎԱՄԻՍ ՄՍԳՆԻՍԱԿԱՆ ՓՈՐՁԵՐԸ

Ա. Մամուլին մէջ մտգիսականութիւնը մատուցելու եւ բարո-
յական տեսակէտով յօղումները հրատարակելու երկու ամիս
վերջ՝ մայիսի զեղեցիկ առտու մը, շուկայ փութացի:

Այն օրը խորհրդաւոր թարմութիւն մը կար օդին մէջ, Վերը
անամպ, թափանցիկ երկինքը հազիւ տակաւին արեւին յառաջա-
պահ ճանաչմանը լուսաւորում էր՝ մինչ ծովը, հիանալի
կամպոյտ մը հազած՝ կերթար կորսուիլ հորիզոնին անորոշութիւն-
ներուն մէջ խորհրդաւոր ցոլքեր ընդունելով լոյսի հականցումնե-
րէն:

Նաւահանգսին մէջ, լոյսի շոգեմաւր խորխորէն խարսխած՝
հազիւ ծովին տարած ոլորտ մը իր հսկայ ծխանէն դէպի դուրս
կ'ուրուագծէր:

Վայրկեան մը, ծովեզրը կանգնած՝ կը դիտէի նաւակներուն
երթեւեկը եւ ընդհանուր ոգեւորութիւնը, որ երձալով ալ աւելի
կը սասկանար:

Քարափին վրայ ճամբորդներու, նաւավարներու հոծ բազմու-
թիւն մը հաւաքուած էր, եւ մինչեւ հեռու լսելի կըլլար անոնց
անորոշ ժխորը, որուն մէջ սուր ճիչեր ալ կը խառնուէին երբեմն:

Տենդոտ քայլերով թղթատուն կը փութամ ուր նամակ մը հետն
ալ ծրար մը կընդունիմ, անմաստ գրչէ մը հասցէիս ուղղուած:

Ղեւսարբուրեմամբ՝ նախ նամակն եւ յետոյ ծրարը այքէ
կ'անցնեմ, բայց այնքան տարօրինակ կը գտնեմ երկուքին ալ պա-
րունակութիւնը որ, առանց իմ կողմէս բառ մը կցելու, վայրկե-
նաբար կը մտադրեմ հրատարակութեան առ զանոնք:

ՆԱՄԱԿԻՆ ԸՆԴՕՐԻՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Մ. Յ. ԽՏՇԵԱՆԻՆ

Ներքեցէ որ ըսեմ թէ անձնապէս չեմ ճանչնար ձեզ, բայց չի գիտեմ ճակատագրական ի՞նչ դիպուած է որ ձեր երկուքին մէջ յարաբերութեան կապ մը կը հաստատէ:

Այդ կապը՝ մազնիսականութիւնն է որ ձեզ ալ ինձի սէս, հետաքրքրուած կը թուի հաւասարապէս:

Որչափ մեծ եղած էր զարմանքս երբ «Մամուլ»ին մէջ կարդացի ձեր Պարզմանութիւնները (*) և ըսեմ թէ ես ալ ճիշտ ձեզի պէս. միեւնոյն գրքին Պարզմանութեան ձեռնարկած էի, որուն գրեթէ վերջին զուխներն ալ աւարտելու վրայ էի, երբ սկսան ձեր հրատարակութիւնները:

Նախ, չկրցի զսպել բարկութեան ակամայ շարժում մը. մտածելով որ ամբողջ ձմրան մը գիշերային տղտութիւններս տպարդիւն մնացեր էին, բայց երբ սկսայ հետևիլ Պարզմանութեան, այն ատեն ձեզի հանդէպ սկսայ համակրութեան զգացում մը սնուցանել, որովհետև կը նըշմարէի ձեր առաւելութիւնները իմ Պարզմանութեանս հետ բաղդատելով:

Նախ, Բրոֆ, Գուէքնպօսի գրքին մեզ համար կարգ մը անօգուտ զուխները զանց ըրած էիք, յետոյ անոր խրթին և մանուածապատ նախադասութիւնները այնպէս մը պարզած, դասակարգած և հստակացած էիք որ, ձեր հրատարակութիւնը դադրած էր Պարզմանութեան մը դրօշմը կրելէ, ասկէ զատ, տեղ տեղ, Բրոֆ-ին ցրուած գաղափարներու՝ անոր digressionներուն դասաւորումը, և ատոնց բնական յաջորդութեան հսկելու ձեր ջանքերը մեծապէս ուշադրու էին:

Հաւանականաբար որ և է ընթերցող, այդ Պարզմանութիւնը բնագրին հետ բաղդատելով, կրճատումներ, սեղմումներ, ընդլայնումներ և տեղափոխութիւններ պիտի նշմարէ հոն, և ատոնց պատճառաւ, թերևս փորձէր քննադատութիւն մը կատարել, բայց ես՝ կը մտածեմ թէ, դուք հետամտած էիք միմիայն, դիւրահամարելի եղա-

նակով, մազնիսականութեան նման, բացատրութիւնը դժուար նիւթ մը հայացնելու, առանց Բրոֆ-ին գաղափարները սխալ ներկայացնելու:

Ըսե՞մ թէ ձեր Պարզմանութեան կանխուածը, ինձի համար փաստակար ըլլալէ աւելի՝ օգտակար ալ եղաւ, տեսէք թէ ինչպէ՞ս:

Մտերիմ քարեկամներէս մէկը, որ բարոյական և մտաւոր հիւանդութիւններու մասնագէտ, և նշանաւոր մազնիսագէտ մ'էր՝ Եւրոպայէ վերադարձին՝ ինձի առաջարկած էր միասին ուղեորութիւն կատարել կարգ մը գաւառական ներքին քաղաքներ:

Այդ առիթով՝ մտածուած ունեցած էի յիշատակներուս նոթագրութիւնը կատարել, ու երբ, ձեր կանխումին պատճառով իմ Պարզմանութիւնս միշտ ձեռագիր մնալու դատաւարտուեցաւ, այն ատեն մտադրեցի զրական ձև մը տալ ուղեորական նոթերուս, անոնցմով վէպ մը կազմելու համար, բայց որովհետև հրատարակութիւններուս շարքը իմ ուզած եղանակովս չէր որ տեղի ունեցաւ, հետևաբար կրնայի այդ վէպն ալ ձեզի յղել իր ձեռագիր վիճակին մէջ, նկատելով որ ան՝ լրացուցիչն է այդ Պարզմանութեան:

Գիտեմ թէ շատ քննադատութիւններ տեղի պիտի ունենան, այս վէպին հրատարակութեան պատճառով, բայց պէտք չէ մոռնալ թէ, պողատու ժառերն են որ քարի հարուածներ էն շատ կ'ընդունին. ասկէ զատ անոնց պատասխանելու հոգը ես կ'առանցնեմ սպասելով որ անձամբ ծանօթանանք իրարու հետ:

Զերդ
Օ Լ Ի Ա



(*) Hypnotisme in mental and moral culture.

Գ Ա Ռ Ի Ե Ա .

Մ Ե Ր Մ Ա Ն Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Կ Ա Մ

Չ Գ Ա Յ Ն Ո Ւ Թ Ե Ա Ն Վ Տ Ա Ն Գ Ն Ե Ր Ը

Իրարու դրացի, դպրոցին մէջ ալ միեւնոյն կտորգն էինք ես և Գեղամ-բարեկամս՝ որու հետ բնաւորութեան, խառնուածքի և ղգացումներու տեսակէտով այնքան նմանութիւններ կը ներկայացնէինք որ շատեր՝ երկուորեակ կը կտրծէին մեզ :

Պատկուց ի վեր, միշտ իրարու համակիր՝ տեսակ մը անքակտելի մտերմութեամբ կապուած էինք, այնպէս որ բնազգաբար, յացարձակ պէտք մը կզգայինք միշտ իրարու ներկայութիւնը փնտռելու : Ը և եթէ երբէք դիպուածը ո և է պարագայի տակ յաժնէր մեզ իրարմէ, անբացատրելի տխրութեամբ կը համակուէինք :

Օրէ օր կ'աւելնար մեր մտերմութիւնը և մեր երկուքին հոգիները կ'եղբայրակցէին իրարու հետ, այնպիսի անբաժան կապով մը, որ կարծես անզգալաբար մեր ուղեղներուն մէջ խորհրդաւոր, անդիմադրելի հազորդակցութիւն մը տեղի կ'ունենար՝ առանց մեր կողմէ որ և է միջամտութեան :

Մանուկ հասակէն ի վեր, երկուքս ալ բուն հետաքրքրութեամբ համակուած էինք, այնպէս որ ամէն բանի խորը թափանցելու բնածին դրդում մը ուժգնօրէն կը դրդէր մեր հոգիները, և այս մղումը այն աստիճան ծայրայեղութեան հասած էր որ դասի միջոցին, ուսուցիչները շատ անգամ կը շուարէին մեր անակնկալ հարցումներէն :

Վառ երեւակայութիւն մը — երկուքս ալ յատկանշելի — կը պահանջէր որ «մեծ մարդերու» կենսագրութիւնը կարգալու հետամտէիք, որոնց ընթերցումը ինչ տարօրինակ սարսուռներ չէր քալեցնէր մեր հոգիներէն ներս, և ինչ անծանօթ զգացողութիւններ չէր վառեր մեր էութեան մէջ . . . :

Ներշնչումի ընդունակ մեր հոգիները, կանուխէն ինքնազարգացումի առաջնորդեցին մեր միտքը, այնպէս որ իբրև կատաղի ընթերցամոլներ, միշտ հետամուտ կ'ըլլայինք ընդլայնելու մեր ծանօթութեանց շրջանակը, որուն հետեւանքով մեր և միւս դասընկերներուն մէջ բաւական լայն անջրպետ մը գոյացած էր :

Տարիներ անցան այսպէս, կեանքի զուարթ խօլ շրջան մը՝ որ իր արագ յաջորդութեան մէջ՝ էն քաղցր վայելքներով կը պարուրէր մեր հոգիները :

Թանկագին յիշատակներ ամբարած էինք, ու երբ տարիներ վերջ՝ յետագարձ ակնարկ մը կը նետէի անցած օրերու վրայ, անխառն հաճոյքով կրնայի գիտել որ Գեղամի հետ մեր մտերմութիւնը միշտ անաղարտ մնացած էր, միայն ժամանակի ընթացքին մէջ՝ զաղափարի հոտանքը, մեր մէջ փոխանակ միևնոյն գծով յատմանալու՝ կը սկսէր տարբեր ուղղութիւն մը առնել :

Բարեկամս հեղհեղ «խորհուրդի մարդու» միտումներ ցոյց կուտար. մինչ ես՝ զգացումներուս շքրջանակը կ'ընդլայնէի : Ան՝ կը փութար կազմակերպել իր մտածումները զանոնք համասեռ կատարելութեան վերածելով, իսկ ես՝ ապակեղբորնացումի կը հետեւէի : Այս հակընդդէմ ձգտումները՝ բնաւորութեան տեսակէտով ալ իրենց անխուսափելի արդիւնքներն ունեցան : Գեղամ օրէ օր՝ աւելի զուարթ աւելի կորովի ար-

տայայտութիւն մը կրնան էր, մինչ իմ վրաս՝ տեսակ մը անբացատրելի մեղամաղձոտութիւն կը տիրէր զոր հազիր կը յաջողէի հակադրել:

Բարեկամս, նպատակի մտադ՝ ասպարէզի մը ընտրութեան մտահոգութիւններովը գրաւուած էր, ան՝ խորապէս գիտակ ներքին կոչումի մը, կ'իզար թէ իր բնածին ընդունակութիւնները, իր նախասիրութիւնները՝ այն ատեն միայն գոհացում պիտի ստանային՝ եթէ երբէք ասպարէզ ընտրէր ջղային և մտաւոր հիւանդութիւններու մասնագիտութիւնը:

Այդ էր իր խտէալը:

Այս մտադրութեամբ՝ հզօրապէս ներշնչուած՝ Գեղամ, մտքին ամբողջ ուժը կեդրոնացուց իր ուսումնասիրութիւններուն վրայ: Հիմա լաւ Փրանսերէն սորված էր, և այն տարին ուր վարժարանէն շրջանաւարտ կ'ըլլայինք միասին, բարեկամս ինձի հաղորդեց իր որոշումը, իր նպատակը:

Այնպիսի կորովի՝ շեշտով մը և այնքան բուռն համոզումով խօսեցաւ իր մտադրութեան մասին որ կարելի էր տարակուսիլ անոր յաջողութեան վրայ: Բայց կը մտածէի թէ բարեկամս դրամ չունէր . . . հետեւաբար դժբաղդ պիտի ըլլար սոսկալի յուսահարութեան մասնուելով այն բոլոր երիտասարդներուն նման՝ որոնք առանց նիւթական բաւարար միջոցներու՝ կը փորձեն որ և է համալսարանին դասընթացքին հետեւել:

Մանաւանդ երբ կ'երեւակայէի թէ քանի մը շարքութէն թերեւ, Գեղամ — իմ մտերիմս, իսպառ պիտի հեռանար քովէս, ո՛հ այս մտածումը չտախազանց կը ապրնապեցնէր զիս . . . :

Ինչպէ՞ս պիտի հանդուրժէի իր բացակայութեան, զիս ո՞վ պիտի մխիթարէր այլևս իմ տխուր վայրկեան-

ներուս՝ ուր անտանելի մեղամաղձոտութիւն մը կը սպրդէր հոգիէս ներս:

Որի՞ն պիտի հաղորդէի իմ յոյզերս, իմ մտածումներս, այո՛, որո՞ւ կրնայի պարզել իմ գեռափթիթ հոգիս տենջանքները:

Ամբողջ գիշերներ լացի բաժանումի մտածումին անգրագարձած ատեն, չտախազանց տխուր էի. այնպէս որ հակառակ բնածին հպարտութեանս ոչ իսկ կրնայի Գեղամէն ծածկել իմ տխրութեան շարժանիքը:

Բարեկամս, պատուական տղայ՝ կը ջանար զիս մխիթարել իր գրաւիչ լեզուովը, կոչում կրնէր ան արժանապատուութեանս զգացումին և կը խոստանար մեկնածին պէս, օրագրի ձեռով՝ հաղորդել ինձի եւրոպական կեանքի միջադէպերը. խոստում մը՝ որուն լիովին կը հաւատայի:

Այս հաւատարմութիւնները մասամբ մեղմացուցին կրած դառն սպաւորութիւններս այնպէս որ բարեկամիս մեկնած օրը, տխուր համակերպութեամբ մը՝ կրցի ընկերանալ իրեն մինչև քարափ ուր վերջին անգամ սեղանցի ձեռքերը կարօտիւ և անձկութեամբ, բայց անկարելի եղաւ զսպել յուզումի պոթկուժ մը մինչ ան՝ նաւակ կիջնէր առանց կորսնցնելու պաղարիւնութիւնը:

Բարափին վրայ, երկա՛ր սպասեցի ձեռքս թաշկինակ մը բռնած՝ զոր օդին մէջ կերերցնէի ջղացողօրէն. նաւակը հետզհետէ կը հեռանար ու կամաց կամաց, աննշմարելի կ'ըլլար թիակներու այն կանոնաւոր ելեւէջը՝ որ յաւալ կը մղէր զայն դէպի ռոգեհաւ:

Անթարթ աչքերով, վերջին անգամ մը ևս դիտեցի բարեկամս՝ որ հեռուէն, շոգեհաւին սանդուխէն վեր կը բարձրանար իր թաշկինակովը օդին մէջէն վերջին ջրան մը ևս ընելով . . . :

ժամերով գամուած մնացած էի ժայռի մը մօտիկը առանց կարենալու տակաւին հաշտուել Գեղամի մեկնումին հետ: Նոյն այդ պահուն կերակայէի մեր անցեալը, այն հաճելի ժամերը՝ զորս սովոր էինք միասին անցնել, ու այդ գեղեցիկ անցեալը, իր բոլոր ուշագրաւ միջադէպերովը՝ վայրկենաբար կը պատկերանար մտքիս առջև, բայց հետզհետէ աւելի կը տխրէի: . . .

Ի՞նչ կրնայի ընել դարմանելու համար այն պարապը՝ որ սրտիս մէջ գոյացեր էր Գեղամի հեռացումով, կը մտածէի առժամաբար մեկնիլ Տրապիզոնէն կամ տաժանելի զբաղումներով ծանրաբեռնել միտքս որպէս զի կարելի ըլլար գտնէ քիչ մը վանել հոնկէ տխրութիւնը՝ անոր տեղ կանգնելու համար բարեկամիս յիշատակներէն կազմուած պաշտելի նկար մը:

Այս խորհուրդը սփոփարար ներգործութիւն մը ունեցաւ վրաս, այնպէս որ Յուլիս և Օգոստոս ամիսներուն երբ՝ հեղձուցիչ տապ մը կը ծանրանար Տրապիզոնի վրայ, թուրութեան, մեղկութեան դատապարտելով է՛ն կորովի անձերն իսկ. ես՝ ընդհակառակը սիրով՝ չարաչար կ'աշխատէի, առանց գանգատելու՝ կարողանալու համար զբաղումիս մէջ ինքնամուսնացութեան հաճոյքը վայելել:

Օ՛րեր անցան այսպէս, անդիտակցարար ապրուած օրերու երկար շարք մը՝ որու միջոցին ջիղերս բաւական կազդուրանք գտան: Հետզհետէ կրնայի աւելի յստակօրէն խորհիլ և աւելի որոշ եղանակով դատել: կղզայի նաև զարգացումիս անբաւականութիւնը որուն պատճառով՝ չարաթ մը վերջ մօտակայ ամերիկեան վարժարան մը կը մեկնէի ուր կարելի պիտի ըլլար ընդլայնել մտաւորական հորիզոնս:

Այդ հաստատութիւնը իր թարմ հրապոյրներովը

գրաւած էր զիս, ուշագրութեամբ կը հետևէի դասաւանդութիւններուն որոնք այնքան շահեկան կը թուէին, միտքս սակայն փոխանակ որոշ ուղղութեան մը ձգտելու՝ ինքնաբերաբար ալ աւելի շեշտուած ապակեդրոնացումի մը կը դիմէր, ձգտում մը՝ որ թերևս իմ համայնագէտի տննջանքներուս միայն ծառայէր:

Կեղարուեստի սէրը օրէ օր անհամեմատ կերպով կարծարծէր, ներսիդիս կը սկսէի սիրել երաժեշտութիւնը, մասնաւանդ կախորժէի քառաձայն հոգևոր մելոմադձոս երգերէն . . .

Կեղեցիկ սկայնները և ամէն բանէ աւելի՝ բնութեան տեսարանները կը դիւթէին զիս: Կարելի՞ էր արդեօք երևակայել այս հաճոյքը զոր կը վայելէի կանանչներու, հեռաւոր բլրակներու և ջինջ երկնքի մը ցուցադրած գեղեցիկութիւններէն:

Աստիճանաբար սակայն խորհուրդի մարդը իմ ալ մէջս կսկսէր յայտնուիլ: Միտքս՝ որոշ ուղղութիւն մը կընդնշմարէր և բնական կոչումի մը հեռանկարը հետզհետէ աւելի ուժգնօրէն կը ցցուէր հոն:

Այս գիտակցութիւնն խրախուսուած՝ մասնաւանդ բարեկամիս ներշնչող նամակներուն ազդեցութեան տակ, բուռն եռանդով մը կը փարէի իմ նախասիրած ճիւղերուս որոնք գրեթէ այն միևնոյն նմանութիւնները կը ներկայացնէին՝ զորս դիտեր էի Գեղամի վրայ:

Ուրեմն, իմ ալ բնածին կոչումս ջղային և մտային հիւանդութիւններու մասնագիտութիւնն էր . . . թերևս. բայց կը խորհէի թէ ախտաւոր, այլասերած մարդկութեան ուսումնասիրութեան չափ՝ կամ նոյն իսկ աւելի՝ ես պիտի հետաքրքրուէի նաև առողջ, բնականոն ուղեղները լաւագոյն զարգացման առաջնորդելու գործով ալ, ինչո՞ւ չէ . . .

Ուրեմն թափառական միտքս պիտի դադրէր այլևս սպակեղորոնացման դիմելէ, ո՛հ, ասիկա շատ առողջ նշան մ'էր՝ արուն համար նոյն իսկ բարեկամէս շնորհաւորութեան նամակներ կատանայի, և կը ցնծայի մտքիս և զգացումներուս մէջ կատարուող այս եղբայրակցութեամբը՝ որ երկու ոյժեր իրարու կը ձուլէր. բայց աւանդ որ այդ ձուլումը վաղանցի՛լ երեւոյթ մը միայն մնաց։

Օրին մէկը, ա՛խ, սոսկալի օր . . . անակնկալ զիպուածը յանկարծ՝ ահուելի հարուած մ'իջեցուց զլլսուս (*): Աներևակայելի դժբաղդութիւն՝ որ կը հարկադրէր վայրկենաբար մեկնիլ ամերիկեան այդ հաստատութենէն աւանց վերջին հասմեսան ալ գտնէ լրացնելու։ Ի՛նչ դժբաղդութիւն, Աստուած իմ . . . :

Խորտակուած, ջլատուած էի այդ սարսափելի հարուածին տակ՝ որ կը ցնորեցնէր զիս. ու միտքս ո՛չ իսկ կրնար խորհրդածել՝ այնքան որ ըսուն նդած էր ջախջախումս։

Ծննդավայր վերագառնալէս վերջ, հոգիս ուղեզիս անզգայութեան մէջէն կընդհարելի քանդումը ոսկի երազներուս՝ որոնք իրականութիւններ ըլլալու սահմանուած էին. աւանդ որ այլևս ամէն յոյս վերջապատ էր ինծի համար . . . :

Այդ անակնկալ պատահարը փչրած քայրայտ էր էութիւնս . . . ու ո՛չ միայն անկարելի էր այլևս հետեւել կոչումիս, այլ նաև հարկադրուած էի ընդգրկել ասպարէզ մ'որ և ո՛չ մէկ տեսակէտով կը պատճառէր

(*): Այս տողերը կ'ակնարկեն բաղաբանի յանցանքի հետևանքով բանտարկութեան մը որուն զո՞ գացած էր Ոլիւս. սակայն վեպը հին Ռէթիմին օրով գրուած ըլլալուն՝ կարելի չէր եղած լուսարանել այս կէտը . . . :

խառնուածքիս։

Չպիտի փորձեմ մանրամասնել չայս պարագաները՝ որոնք տակաւին այնքան սարսուռ կազդեն ինծի, կզգայի միայն որ իմ առջի էութենէս. խելակ մը միայն մնացած էր, աննպատակ ստուեր մը՝ որուն մէջ ատենուք կենսականութիւնը կը յորդէր։

Ի՛նչ սոսկալի կերպարանափոխութիւն, Աստուած իմ . . . Ինչո՞ւ ենթարկուէի ասանկ տագնապայի կացութեան մը՝ որ ճակատագրին ինծի դէմ արձակած է՛ն անիրաւ վճիռն էր, ինչո՞վ արդեօք յանցաւոր էի . . . :

Գաղանի՛ք։ Ամի՛սներ անցան, կորսնցուցած էի ոչ միայն կուրծքս, այլ նաև մտքիս յստակութիւնը և այն իմացական ձիրքերը՝ որոնք մեծ դեր մը կատարելու սահմանուած էին։ Բայց պէտք էր մոռնալ զանոնք՝ քանի որ իրենց կանգնած շէնքէն փլատակներ միայն կը մնային . . . :

Կամբի բուռն ճիգով մը, փորձեցի համակերպիլ կեանքիս նոր պայմաններուն որովհետև կարելի չէր նոյն իսկ ուրիշ կերպ մը խորհիլ, երկաթէ ցանցի մը մէջ կաշկանդուած, կապուած էի անքակտելի կերպով . . . Ընդվզումներս, ըմբոստացումներս ասպարիւն յուսախաբութեան միայն ծնունդ կուտային քանի որ նախկին օրերու վերագարծը՝ անդառնալիորէն խոյս տուած էր ինձմէ . . . և ուրիշ կարելի միջոց չէր մնար, եթէ ոչ համակերպիլ։ Այ՛ն՝ համակերպիլ՝ լքումին և զրկանքի մէջ փնտռելու համար հոգիիս ցաւերուն անզգայացումը։

Ու ես ալ. համակերպեցայ, զոհուած սրտով և ալ աւելի զոհուած մտքով։ Աննպատակ կեանք մը կը քաշկուտէի այլևս։

Իբրև զբաղում՝ ինծի յանձնուած էր, վտճառատան մը մէջ, զանձապետի և հաշուակալի պաշտօնը. այնպէս որ, առտուընէ մինչև իրիկուն՝ գրասեղանիս առջև գամուած կը մնայի հաշիւներու պատրաստութեամբ կամ ասմարի արձանագրութեամբ զբաղած ըլլալով:

Միշտ դատապարտուած էի թուանշաններ մրտտել, հաշուընթացներ օրինակել և զրամի մուտք և ելքին հսկել:

Այս մեքենական աշխատութիւնները օրէ օր աւելի կ'անզգայացնէին զիս, կը սկսէի մարդատեաց մը դառնալ և դժբաղդ կեանքիս ցաւազին յիշատակներովը պարուրուած՝ օրէ օր կ'զգայի հոգիիս փլուզումը՝ որ կատաղութեան արցունքներ կը խլէր աչքերէս...

Տարիներ տեւեց այս բռնագատուած, բազմաչարչար կեանքս՝ որ հիմա անընդունակ դարցուցած էր զիս վայելելու ո և է հաճոյք: Հոգիս արդէն ընկճուած՝ միտքս՝ ալ հետզհետէ կորսնցնելով իր կենսական ոյժերը, մարդ մեքենայ մը դառնալու վրայ էի... տըխսւեր երևոյթ...

Մէկ զբաղում միայն կը ճանչնայի, տոմարներու արձանագրութիւնը, այո՛, թուանշաններու մէջ թաղած էի իմ վիշտերս, հոգիիս բոլոր տուայտանքները՝ որոնց հետքերը կարելի պիտի ըլլար երբեմն նշմարել գողգոջուն գրերուս մէջ...

Պտոյաներս սահմանափակուած էին տունիս և զրասենեկիս միջև գտնուող տարածութեան մէջ:

Մեկուսացած մէկու մը կեանքը կատրէի: Բոլորովին հեռու ընկերութենէ, հեռու նաև բարեկամներէ և օրէ օր, զաղտնի տխրութիւն մը կը սողոսկէր մեկամաղձոտ հոգիէս ներս՝ որ հիմա կը հիւժէր անցեալ օրերու անդառնալի յիշատակներուն մորմտքումովը:

Հիւանդ էի. բառին բո՛ւն նշանակութեամբ հիւանդ և կը ջանայի ինքնամոռացումի մէջ խելդել ամէն ցաւերս՝ մինչև որ բոլորովին անզգայանայի. ես որ ժամանակին, հետամտած էի այնքան զողտրիկ զգացումներ մշակելու, հիմա գոյութեան մէկ նպատակ միայն կը ճանչնայի—Անզգայացում:

Աս չէ՛ր լա՛ւագոյն կեանք...

Երկար ստանէ ի վեր՝ թղթակցութիւնս դադրած էր Գեղամի հետ: Օր մը, անսկնկալ կերպով իրմէ նամակ մը ստացայ՝ որով կը յանդիմանէր լռութիւնս՝ և իր նորանոր յաջողութիւնները կը նկարագրէր ջանալով կորով ներշնչել դառնացած հոգիիս:

Այս խորհրդաւոր նամակը՝ վայրկեան մը լուսաւորեց զիս բայց յանկարծ՝ ցաւազին զգացողութիւններու ծնունդ տուաւ: Նոյն այդ պահուն՝ երևակայեցի թէ ես ալ յաջողած երիտասարդ մը եղած պիտի ըլլայի՝ եթէ անողոք ճակատագիրը տարբեր կերպ մը չի վճռէր. . . : Այո՛, ես ալ պիտի կրնայի հետեւիլ բարձրագոյն կոչումի մ'որ՝ հիմա, անդառնալիօրէն խոյս տուած էր:

Այդ յուսահատ վայրկենիս՝ բողբոջի խուլ մունչիւն մ'ունեցայ նախախնամութեան դէմ. անխժեցի այս բոլոր կարողութիւնները՝ որոնք միմիայն զիս դժբաղդ ընելու ծառայեր էին և կատաղօրէն ջանադի կամօրի բուսն ճիգով մը, նոյն իսկ ջնջել արմատախիլ ընել զանոնք՝ որպէսզի էութեանս ներքին խորշերէն, այլ ևս խուլ ըմբոստացում մը տեղի չունենար ներկայ համակերպումիս դէմ. . . :

Չէ մի՛ որ անոք միշտ կ'օրօրեն զիս՝ անցեալ յոյսերու ոսկեղօծ հեռանկարովը:

Ինչո՞ւ այս երկուորական բնութիւնը. ինչո՞ւ այս ներքին պայքարները. արդեօք չէ՞ր բաւեր չախչա-

85-195851 / 0692

խումս՝ որուն կուգային հոգեկան տուայտանքներ ալ աւելնալ . . . :

Երկու տարի ևս անցան. հիմա կապրէի իբրև մեքենայ մարդ մը միշտ խորասուզուած թուանշաններու մէջ, որոնց տեսքը սակայն խորհրդաւոր սփոփանք մը կը պատճառէր ինծի, իսկ գիտակցութեան վայրկեաններուն՝ երբ ակնարկ մը նետէի տոմարներու ստուար հատորներուն վրայ՝ անկարելի էր զսպել յուզումս . . . :

Անոնք չէին լուռ վկաները հոգիիս մարտիրոսացումին և անոնց էջերուն մէջ չէ՞ր որ արձանագրուած էր զոհուած սրտիս պատմութիւնը, բայց ո՞վ պիտի կրնար կարդալ թուանշաններուն հոգեբանութիւնը՝ որ ինծի միայն ծանօթ էր . . . :

Այս մտածումները երբեմն այնպէս մը կը դղրդէին հոգիս՝ որ կը դիտէի. կը յուսահատէի, կը յուզուէի և նոյն իսկ երբեմն կուլայի այն պահերուն՝ երբ գրասենեկիս մէջ բոլորովին առանձին, հոգիս անձնատուր կ'ըլլար տարօրինակ փոթորիկներու :

Չորեքշաբթի առտու մըն էր. Յունիսի տաք արև մը գրասեղանիս վրայ սպասող նամակները ու պահարանները, լայն ճաճանչով մը կը լուսաւորէր, մինչ տենդոտ անհամբերութեամբ, հասցէներ գրելու զբաղած էի :

Գուրսէն գաղջ բուրում մը մինչև գրասենեակ կը ծաւալէր ու ես՝ տեսակ մը թմրութեամբ պարուրուած կը փութայի վայրկեան առաջ վերջացնել գործս :

Բոլոր նամակներն ալ պատրաստ էին, ու երբ թըղթատուն կը զրկէի զանոնք, յանկարծ օտարական մը մուտք գործեց, գեղեցիկ, բարձրահասակ, առողջ երիտասարդ մը որ չորս բոլորը դիտելէ վերջը ակնարկը վրաս կը սեւեռէր :

Ոչ միայն ուշագրութիւն չէի ըներ իրեն, այլ

նաև հազիւ զխուռ անսարքեր շարժումով մը կը փորձէի ողջունել զինքը ձեռք սոռնելու համար տոմարի արձանագրութիւնը :

Նոյն պահուն, ան՝ մօտենալով գրասեղանիս, կանգ առաւ ու ինծի երկարեց քարթը զոր բաւական դժկամակութեամբ ձեռքէն կ'առնէի :

Յանկարծ՝ հազիւ ակնարկ մը նետած էի վրան երբ, ընդոտս վեր ցատկեցի տեղէս, և ապշահար՝ —

Գո՛ւն, Գեղամը . . . կրկնեցի շփոթած, որու վրայ բարեկամիս վիզը կը խոյանայի անդիմադրելի մղումով մը . . . :

Կարելի՞ ըան էր երևակայել այդ վայրկեանին ուրախութիւնս երբ մտերմիս վերադարձը այնքան հին ու նոր յիշատակներ պիտի արծարծէր . . . :

Ի՛նչեր չունէինք իրարու ըսելիք :

Յուզումս, քիչ մը մեղմացածին պէս, բարեկակս որ մինչև այդ վայրկեանին լուռ մնացեր էր, զիս դիտելով՝

— Ի՞նչ փոփոխութիւն է աս, Աստուած իմ մըմնջեց անձկութեամբ, խեղճ բարեկամ, որքան տառապած կերևիս, բայց քաջ. կտրիճ եղիբ, Ջանանք մեր կարօտակէզ հոգիներու մէջ քիչ մը ճառագայթ, քիչ մը լոյսի նշոյլ կաթեցնել :

Բացակայութեան այսքան տխուր շրջանէ մը վերջ, երբ մեր հոգիները դարձեալ իրարու կը կցուին՝ նրուիրական պարտք մը չի՞ ծանրանար մեր վրայ, տալու անոնց այն հաճոյքները՝ որոնց ծարաւի են . . . :

Բարեկամիս այս հակիրճ նախաքանը, ելիքտրական հոսանքի նման, թափանցեց հոգիիս էն խորունկ ծալքերուն մէջ. սարսուռ մ'զգացի, կարծես՝ վայրկեանրար էութեանս մէջէն շնջուեցան այն արհեստական խրամատները, որոնք մեկուսացուցած էին հոգիս, իրական կեանքի հաղորդակցութենէ :

Գեղամ վայրկենարար ըմբռնած կը թուէր իմ հոգեքանութիւնս, այնպէս որ այլ եւս միմիայն զուարթ խօսքերով կը համեմէր իր գրաւիչ խօսակցութիւնը գոցգետ՝ տաքցնելու համար սառած հոգիս:

Որբա՛ն նրբամիտ և անկեղծ էր իր վերաբերումին մէջ. իրիկուան՝ բարեկամիս հետ, կտաքով կը մեկնէինք դէպի Տէրիմէն Տէրէսի՝ աւազուտ տարածութիւն մ՝ որ քաղաքը կը գրկէ հեռաւոր անկիւնէ մը:

Միապաղաղ ծովը, մեր աչքին կը պարզուէր փայլուն երանգապնակի մը նման. անշարժ, թափանցիկ ծով մը՝ որ հորիզոնին հետ կը գրկուէր:

Վե՛րը երկնքի մէջ անկիւնը՝ գորշագոյն ամպերու երկար շարք մը կախուած էր ճի՛շտ լեռան մը գագաթին վրայ:

Բարեկամիս հետ՝ ծառի մը հովանիին տակ ընկողմանած, մեր այս մենաւորիկ, խորհրդաւոր առանձնութեան մէջ ինչե՛ր չունէինք իրարու ըսելիք. . . :

Գարեջուրի շիշերը հետզհետէ կը պարզուէին կանոնաւորութեամբ և մենք տակաւին ընկղմած կը մնայինք մեր լուռ հայեցողութեան մէջ, բայց պէտք էր խօսիլ, պէ՛տք էր Գեղամի պարզել սրտիս վէրքերը, և հաղորդակից ընել զայն. իմ տազնապնեղուս իմ վիշտերուս, որոնք այնքան վրդոված էին զիս:

Չուշացաւ վայրկեանը. . . :

Ամբողջ երկու ժամ աւելի խոստովանութիւնս, որու միջոցին պատմեցի իմ ուսանողի կեանքս և իմ դժբաղդութիւններէս սկսելով մինչև ներկայ զբաղումներուս ամէն մանրամասնութիւնը:

Գեղամի դէմքին վրայ, դառնութեան արտայայտութիւն մը կը նկարուէր, և աչքերը երազային երևոյթ մը կառնէին, մինչ ստիկ կ'ընէր ան՝ պատմութեանս:

Երբ վերջացուցի, աշխուժիւ՝

— Երբէք, պէտք չէ յուսահատիլ աւելցուց. — ամէն ինչ կարելի է դարմանել: Դժբաղդութիւնդ՝ քերկու ազդեցութիւն թողած է վրայ:

Ա. — Արգիլած է մտքիդ տիրապետութիւնը զգացումներուդ վրայ:

Բ. — Չսպիլ, անզգայացնել ջանացած է զգացումներդ, արգիլելով անոնց բնական արտայայտութիւնը:

Այս երկու շեղումներուն դարմանումն ալ է՛ն դիւրին գործն է մէկուն համար՝ որ մտքի և հոգիի հիւանդութիւններէ կը հասկնայ:

Հիմա, առաջարկ մը պիտի ընեմ, զոր եթէ ընդունիս, վստահաբար կընտմ ապահովել թէ, կարճ ժամանակի մէջ՝ միտքդ և զգացումներդ շատ աւելի պիտի կանոնաւորուին սրբան երբէք չի պիտի կրնայիր երեւակայել:

— Ո՞րն է այդ, հարցուցի՝ թէ անձկութեամբ և թէ հետաքրքրութենէ մղուած շեշտով մը:

— Շա՛տ հեշտ առաջարկ մըն է, պատասխանեց բարեկամս. պէտք է որ մէկ ամսուան արձակուրդ պահանջես վաճառատունէդ, որպէսզի երկու օրէն միասին մեկնինք, դէպի Սամսոն. Մարզուան, Ամասիա, Թօբաթ, Սվաղ և կարգ մը ուրիշ քաղաքներ:

Այս հաճելի ճանրորդութիւնը ոչ միայն իր գեղեցիկ տեսարաններով պիտի կազդուրէ յոգնած շիղերդ, այլ նաև կը յուսամ որ առիթներ ներկայանան՝ որոնց չնորհիս, յաջողիս ձեակերպիլ մտքիդ ընդհանուր ուղղութիւնը:

Չպիտի փորձեմ աւելի մանրամասնել՝ անակնկալներ հայթայթելու միակ մտածումով:

Ըսեմ թէ, այդ մէկ ամսուան պտոյտը բաւական պիտի ըլլայ, որպէս զի վերստանաս երջանկութիւնդ՝

հիմա, համաձայն են, ր, այնպէս չէ՞ . . . :

Մտածեցի վայրկեան մը, կարելի՞ էր սակայն մեր-
ժեզ այսքան բարեացակամ առաջարկ մը, քանի որ
վստահատունէն ամիս մը արձակուրդ խնդրելու,
ո ե է անպատեհութիւն չպիտի ծագէր:

Լիովին հաւանութիւնս յայտնելէ վերջ՝ հեռացանք
միասին Տէիրմէն - Տէրէսիէն ուր իրիկուան խոնաւու-
թիւնը կը ծանրանար:

Արեւը հորիզոնին կողմը հակած՝ լոյսի խոշոր սիւն
մը կը ձեւացնէր ալիքներուն վրայ, որոնք ոսկեգոյն
կարմիր ցոլքերով կը շողային: Հետզհետէ թափանցիկ
պայծառութիւն մը կը նկարուէր ծովին կողմէ, որուն
մութ ալիքներուն մէջ մեղմօրէն՝ կը խորատուզուէր
խրոխտ արեւին լայն սկաւառակը:

Երբ կառք կը նետուէինք՝ անբացատրելի, սար-
սուռներ կը քալէին ջիղերուս մէջ, ուրախութեան,
տխրութեան և ներշնչումի խառն զգացումներ, որոնք
հոգիս կը գրաւէին: Որպէս թէ բարեկամիս ներկայու-
թիւնը, փրկարար ներգործութիւն մը ունեցած ըլլար
էութեանս վրայ . . . :

Հիմա, հոգիս կ'սկսէր տարտամօրէն գիտակցիլ իր
խղճալիօրէն բռնադատուած կացութեան, և տարա-
կոյսին հետ՝ յոյս մ'ալ կը վերածնէր մտքիս մէջ, և
ինքնիրէնս կը հարցնէի, թէ արդեօք, Գեղամի յայտա-
բարութեան համեմատ, կարելի պիտի ըլլա՞ր երջան-
կութեան վերագարծը ողջունել . . . :

Ճամբորդութեան առթիւ, բարեկամիս որոշած
պայմանաժամը խիստ արագ անցաւ:

Մեկնելէ առաջ, վերջին անգամ դարձեալ գրա-
սենեակ այցելեցի՝ ուր տոմարներու ստուար հատոր-
ները վայրկեանաբար աչքիս զարկին:

Խորհրդաւոր վայրկեան մը կ'անցնէի, ուրախու-

թեան և յուզումի տեսակ մը նոպայի ընկերացած՝ որ
տենդոտ ոգևորութեամբ կը պաշարէր զիս, այս ան-
գամ:

Կէս ժամ վերջ՝ մեքենարար կը հետևէի Գեղամի,
որուն հետ դէպի քարափ կ'ուղղուէինք, մօտենալով
այն խորհրդաւոր ժայռին, որին մօտիկը, տարիներ
առաջ կանգնած՝ դիտեր էի բարեկամիս մեկնումը . . . :

Այն օրէն մինչև հիմա, մտքիս և հոգիս մէջ ի՞նչ-
քան փոփոխութիւններ տեղի ունեցած չէր, Աստուած
իմ . . . :

ԳԵՂԱՄ Բ.

ԳԵՂԱՄԻ ԵՒՐՈՊԱ ԱՆՅՈՒՑԱԾ ԿԵԱՆՔԸ

ԿԱՄ

ԻՆՓՆԱՎՍՏԱՀՈՒԹԵԱՆ ԴԱՍԸ

Հակասակ սոսկալի տաքին՝ մեղմ զեփուրը զգալի
կըլլար օդին մէջ: Քարտիին երկայնքը խուռն բազմու-
թիւն մը կ'երթեկէր, իսկ ծովին վրայ, զանազան
ձևերով և մեծութեամբ նաւակներ ամէն կողմէ, ակ-
նախտիղ տեսարան մը կը պարզէին:

Կարելի չէր նկարագրել, այդ վայրկեանին տիրող
ոգևորութիւնը, կարծես ամէն ինչ մոգական ազդե-
ցութեան մը տակ՝ տարօրինակ գործունէութիւն մը
ստացած ըլլար:

Ամէն կողմ շարժում և ոգևորութիւն միայն տեղի
կ'ունենար, իսկ ամբօխին ճիչերն ու ազաղակները,

իրարու խառնուած՝ աննկարագրելի ժխոր մը կը ներկայացնէին :

Իրիկուան ժամը տասն էր երբ նաւակ մը՝ քարափէն կը բաժնէր մեզ սրտի անձկութեամբ :

Մեր առջին հանդարտ ծովը, անծայրածիր կը տարածուէր, հազիւ իր մակերեսին վրայ խորհրդաւոր սիւք մը անմեղ ալեակներ կը գծէր, ուր նաև խոնարհող արեւին վերջին ցուքերը կուգային սարսուռ :

Հոյտի Օրորա շոգենաւը, հեռո՛ւն նաւահանգիստէն դուրս խարսխած կ'երեւէր, իրիկնամուտի ճածանչուրով շքեղացած : Անոր ծխնելոյզէն միայն, ծուխի հոծ ոլորտներ կը բարձրանային, որոնք արամատեսիլ երեւոյթ էր կ'առնէին կարմրագոյն մթնոլորտին մէջ :

Յո՛ւնկարծ, բամբ, խրոխտ եղանակ մը տարածուեցաւ օդին մէջ, որուն արծազանգը կրկնուեցաւ հեռո՛ւն, ցամաքի կողմը՝ օխուր նմանողութեամբ :

Նաւ հասած էինք արդէն և քանի մը վայրկեանէն Ա. կարգի ուղևորներու յատկացած բարձրավանդակի վրայ, լայն աթոռներուն մէջ՝ ընկողմանած, կը դիտէինք խորհրդաւոր լուսեան մէջ՝ Տրապիզոնի համայնապատկերը որ պարզապէս հրաշալի էր այդ պահուն :

Ամբողջ քաղաքը, իրիկնամուտի տարտամ ստուերներուն մէջէն, հիանալի, խորհրդաւոր հրկիզումի պատրանքը կ'ընծայէր :

Արեւին վերջապահ ճառագայթները՝ հեռո՛ւն մեր գէմը կանգնող շէնքերուն ապակիները կը վառէին տարօրինակ, անբացատրելի ցուքերով : Կարծես քաղաքը ամբողջովին բոցերով ճածանչներով շրջապատուած ըլլար, որոնք կը փայլէին, կը շողային բանաստեղծական աննման վառքով մը :

Իրիկուան սիւքին մէջէն մեզի կը հասնէր նաև

արծազանգը զինուորական նուագախումբին որ կիզէր շիտարի բարձունքէն՝ քայլերդ մը՝ կը հնչեցնէր խորհրդաւոր ներգաշնակութեամբ :

Այդ գեղեցիկ կտորը որ հեռուանց ալ աւելի ախորժալուր կը հնչէր ականջիս՝ զիս հեշտագին սարսուռներով կը պաշարէր :

Հոյիս մէջ կը սկսէին նոր յոյներ բողբոջել, որոնք հետզհետէ կը թօթափէին ներքին անպայտութիւնս :

Իր մուտ կապոյտով համատարած ծովը, վերջալոյսի հիանալի շքեղութիւնը, հորիզոնին կարմրութիւնն և նուագախումբին գմայլելի արծազանգը, այնպիսի ներգործութիւն մը կուեննային վրաս զոր չպիտի կրնայի արտայայտել և ոչ մէկ բառով :

Հոգեկան այս սլացիկ յախշտակութեանս մէջ՝ հազիւ կրնայի տարտամօրէն լսել մեկնումի զանգակին մալ : Ինչու՞նք՝ որուն կը յաջորդէին մեքենաներու ժխորը և սուլիչի սուր ձայներ :

Յանկարծ շոգենաւը դղրդեցաւ, յետասկողմէն խույ արժուկ մը լսելի եղաւ, խորտակումի տեսակ մը ուժգին հեծեծանքի նման որուն վրայ նաւը սկսաւ մեկնիլ ետեէն սպիտակ լայն ախոս մը գծելով :

Տրապիզոնի շքեղ տուները հեազհետէ կը քօղարկուէին մշուշին մէջ ուրկէ հազիւ տարտամ լոյսեր կը պլպլային :

Ներշնչուած, վերացած էի այդ պահուն, բայց Գեղամը մտիկ ընելու փափաքը՝ միւս կողմէ կը տենդավառէր զիս, պէ՛տք էր խօսեցնել լինիլ քանի որ իր կեանքէն տակաւին բա՛ւ մը խկ արտասանած չէր :

Դեռ ինծի աւեղծուած կը մնար, թէ ի՞նչպէս բարեկամ մը յաջողած է արդարացիել իր յաջող մարդու համբաւը :

Արդեօք ի՞նչ շահեկան բաներ չունէր ըսելիք... :

Ահա, այս մտածումներով պաշարուած՝ Գեղամ ըսի, երկու օրէ ի վեր զգացումներս բուռն յուզումի ենթարկուեցան, յոյս մը, նշոյլ մը սպրդեցուցեր մթագնած էութեանս մէջ: Քանի որ ներկայութիւնդ այսքան կը խանդավառէ զիս, կենսագրութիւնդ արդեօք որքա՞ն աւելի հզօր ներգործութիւն մը չպիտի ունենայ վրաս: պատմէ զայն և ներշնչէ զիս:

Քարեկամս ժպտեցաւ և աչքերուն մէջ երազկոտ արտայայտութիւն մ'առնելով:

— Ծի՛շտ ատենն է որ նկարագրեմ ըսաւ, բաժանման օրերէս մինչև հիմա, կեանքիս անցքերը՝ որոնք թերևս իրենց շահեկանութիւնն ունենան:

Կը յիշե՛ս մեկնած օրս, երբ՝ շոգեհաւէն վերջին անգամ նշան ըրի՝ թաշկինակովս, դուն՝ քարափին վրայ, ժայռի մը եզերքը կանգնած՝ կը դիտէիր զիս անձկութեամբ...:

Չափադանց յուզուած էի այդ վայրկեանին. կարօտը այնքան բուռն կերպով կը գոռար ներսիդիս որ անտանելի պահ մը անցնելու վրայ էի:

Անցեալ քաղցր օրերու յիշատակները, կանոնաւոր տողանցով կը պատկերանային մաքիս՝ իրենց ոսկեղէն գծերով և կեանքիս մէջ, առաջին անգամն ըլլալով, այդ իրիկունը շոգեհաւին մէջ՝ անձնատուր եղայ յուզումներուս ըմբոստութեան:

Բաժանումը այնքան տխուր կազդէր որ բոլորովին մեղամաղցութեամբ համակուած էի. Աստուած իմ կը մտածէի, ի՞նչպէս պիտի հեռանայի ծնողքէս, բարեկամներէս և ծննդավայրէս՝ ուր այնքան քաղցր յիշատակներ թողած էի: Բնազդաբար պահ մը սոսկում զգացի անձանօթ միջավայր մը մեկնելէս, ինձի այնպէս կը թուէր որ ամէն քայլափոխի դժուարութեանց և խոչնդոտներու միայի պիտի ընդհարէի:

Մէկ կողմէ՝ մասնագիտութեան նետեկու նկատաւոր իսկ միւս կողմէ կարօտախտէ ծնած յուզումները այնպիսի բուռն բաղխում մը կուենային մտքիս մէջ որ գուրխի սաստիկ ցաւով մը անկողին ինկայ այն գիշերը, առանց կարհնալ կացութեանս գիտակցութիւնը ունենալու:

Յաջորդ առտուն, գեղեցիկ օդով մը՝ նաւը կիրասօնի առջև կը խարսխէր:

Երբ աչքերս բացի՝ հապճեպով՝ դուրս նետուեցայ խցիկէս, և օդին զովութենէն գինովցած, վայրկենաբար վեր փութացի, առտուան նոսր մշուշին մէջէն գիտելու համար կիրասօնի գեղեցիկ ծովեզերքը, որ կը տարածուէր գեղածիժաղ բլրակներու ստորոտը:

Այդ վայրկենին՝ դիմացը, շեռներուն ետեւէն հորիզոնը կը կարմրէր, կը բոցավառէր հիանալի տեսարան մը պարզելով: Բայց ես չէի կրնար նոյն իսկ ուշադրութիւնս այդ կողմը դարձնել: Որովհետև միտքս անդիմադրելիօրէն պաշարուած կը մնար խորհրդաւոր հարցով մը...:

— Պէտք էր տեղի տալ յուզումներուս թէ ոչ. ահա՛ կենսական խնդիրը:

Ներկայ կացութեանս մէջ, երբ՝ հոգեկան կորովի և մաքիս յստակութեան կը կարօտէի՝ իրաւունք կըրնա՞յի ունենալ մեղամաղճոտութեամբ համակուելու:

Կարիլի չէ՞ր արդեօք զսպել, սանձահարել զգացումներս՝ դատողութեան հակալնին ենթարկելով զանոնք:

Այս հարցը ժամերով մտածել տուաւ ինձի. կշռեցի, վերլուծեցի մտային վիճակս, քննեցի հոգիիս ուժերը, և այն եզրակացութեան հասայ թէ՛ կարելի էր, այո՛, կամքի բուռն թափով մը, ինձի հպատակեցնել զգացումներս, ու ես գերագոյն որոշումս տո՛ւի...:

Այսպիսով կենին, ճշգրտած էր այլևս ըսելիքս: Հե-
տևաբար և ոչ մէկ պարագայի տակ տեղի չպիտի տա-
լի համակրութեան կամ ամէկոտութեան զգացողու-
թիւններուս, ոչ ալ ընկրկէի նպատակիս պահանջած
զոհողութեան առջև:

Այն անծանօթ կեանքը ուր կը գիմէի՝ թերևս
մերժումներու, յուսախաբութիւններու և դառնու-
թիւններու ենթարկէր զիս, բայց պէտք չէր քնա-
յուսահատիլ, ոչ ալ նշանախեց մ'իսկ տեղի տալ . . .

Թերևս անօթի մնացի, և սակայն այդ պարագային
ալ, կոչում՝ պիտի ընէի հոգիիս թագուն ուժերուն,
որոնց շնորհիւ ոչ միայն կը յուսայի, այլ և լիովին կը
հաւատայի ապագայ յաջողութեանս:

Շոգեհուսակն բարձրամտագակին վրայ, անկիւն մը
քաշուած այսպէս կը խորհրդածէի պարկեշտ ասորուս-
տի միջոցներ փնտռելով. մինչև որ կարելի ըլլար
համարարանի դասընթացքին հետեւիլ:

Զգացումներուս վրայ, մտքիս վերջնական յաղթա-
նակը ապահովելէ վերջ, կը կարծէի թէ ամէկոտու-
թեան, յուսահատութեան և յուսախաբութեան հետքե-
րը, այլևս բոլորովին անհետացած էին էութեանս
մէջէն:

Նոր ոյժ մը կը ներակուէր ինծի, և գոյաբու-
թիւններու յաղթելու ներքին փափաքը, գերագոյն
պէտք մը կը դառնար հոգիիս: Վճարած նուա՛ր յոյժիս
չափ քովս դրամ ունէի, և սակայն բան մը կար, զոր
կրնայի վայրկեանաբար կատարել, այսինքն որսուումե-
րըս անմիջական կիրառով գործադրելու փորձը:

Դրամական անձկութեանս պատճառով հնար չէ՞ր
արդեօք, կը մտածէի միջոց մը մտածել նոյն իսկ նա-
ւին մէջ, այո՛, ինչո՞ւ չէ, քիչ մը դրամ շահելու:

Այսպէսով նախ փորձելու թէ՛ ո՛ր աստիճան գործ-

նականացած էի, և յետոյ վայելելու համար: արդար
աշխատութեան բարոյական և նիւթական վարձատ-
րութիւնը:

Հոտ մտածում մը կ'ունենայի, նաևին մէջ բուս-
կան թուով բարձրաստիճան ուղեորներ կային, որոնց
կօշիկները կարելի էր ներկել, կամ անոնց կրնայի կա-
ղին և ուրիշ մրգեղէններ ծախել՝ քաղաքավարու-
թեամբ գնում հարկադրելով:

Այս խուհուրդէն թելագրութեամբ՝ կիրասուն ցամաք
ելայ, ուր ներկեղէնի կազմածնեք գնելէ վերջ, կաղի-
նի և այլ և այլ պատուղներու համեստ պաշարով մը
բեռնաւորուած՝ դարձեալ շոգեհուս վերադարձայ:

Յանկարծ խորհրդաւոր մեղամաղձութիւն մը գրա-
ւեց հոգիս. ինչ դժուար բան պիտի ըլլար. կը խոր-
հէի ուրիշին քմահաճոյքներուն ենթարկուել, ես՝ որ
մինչև այդ պահուն զերծ մնացած էի ապրուստի մտա-
հոգութենէ, հետո կը մնայի տակաւին ըմբռնելու
մարդկային անձնասիրութիւնը կամ իմ կրեւիք յու-
սախաբութիւնս, քանի որ ամէն ինչ դեռ վարդագոյն
երանգներով կը ներկայանար մտքիս:

Մինչև իրիկուն, խղճահարութիւն զգացի գործի
ձեւնարկելէ առաջ . . . եթէ անձնատուր ըլլայի
մտքիս բնական հոսանքին, ապահովաբար, երբէք
կարելի չպիտի ըլլար որոշումներս գործադրել: Հե-
տևաբար, նոյն այդ իրիկունը, նախ՝ զսպեցի ինք-
զինքս և փութացի մտածումներս պարզել նա-
ւապետին — բարի, ազնիւ ծերուկ մը՝ որ ոչ միայն ու-
զեց գնահատել ջանքերս, այլ նաև գերագոյն փափ-
կանկատութեամբ խոստացաւ ծանօթացնել զիս ու-
ղեորներուն, հաւաստելով թէ անոնք, իր յանձնա-
րարութեամբ՝ ուեղի բարեացակամ վերաբերում մը
պիտի ունենային ինծի հանդէպ:

Սկզբունքով կ'ընդունէի, ու է պատուաւոր գործի գիշանելու պէտքը, և սակայն երբ խնդիրը, գործնական աշխատութեան եկաւ, հպարտութեան խուլ զգացողութիւն մը արգիլեց զիս նաւին մէջ սոււտուր ընելէ:

Ներքին ըմբոստացում մը չէր թոյլատրեր որ ես կօշիկ ներկէի . . . :

Ես որ մինչև այդ վայրկենին դրամի համար և ոչ մէկին դիմել հարկադրուած էի՝ ի՞նչպէս պիտի խոնարհէի մինչև այդ աստիճան . . . :

Զգացումներս դարձեալ ընդվզել փորձեցին բայց անօգուտ էր այլևս, քանի որ, նախապէս որոշած էի սանձահարել զանոնք, և ինքնաթիւսպրութեան բուռն թափին տակ, կրցի՛, առանց նկատի առնելու ամօթահար վիճակս, այո՛, կամքի զօրաւոր ջանքով մը կրցի առաջին վաճառումներս կատարելէ վերջ, հաճեցնել մէկ քանի ուղեւոր որ ներկել տան իրենց կօշիկները:

Ամէն քանի մէջ միշտ առաջին քայլն է որ դժուար է. կըսէ Փրանսական առածը:

Իմ ալ առաջին փորձս թէև տաժանելի՛ բայց յաջող անցաւ. այնպէս որ օրեր յետոյ Մառսէյլի քարափին վրայ ոտք կոխած ատենս՝ հպարտութեամբ կը գիտէի, որ վճարած նուազարժիս չափ՝ դրամ՝ շահած էի:

Մարսէյլ հասայ՝ այդ բանուկ նաւահանդիստը, թէև անսնտօթ միջավայր մը, բայց չափազանց կը շահագրգռէր զիս:

Քարափներուն ոգեւորութիւնը, փողոցներուն խառն բազմութիւնը և կառքերուն անընդհատ երթևեկը՝ այնքան տարօրինակ տպաւորութիւն մը կը թողէին վրաս որ կը տարակուսէի իմ յաջողութենէս՝ այդ քաղաքին մէջ:

Բայց պէտք չէր յուսահատիլ, այնպէս չէ՛, լա՛ւ, ին՞չ կրնայի՞ ուրեմն ընել, պատշաճ եղանակով՝ դրամ շահելու համար:

Նոյն օրը կարգ մը հայերու հանդիպեցայ՝ որոնք հայրենակցի մը փութկոտութեամբը զիս գիւրամատչելի օթերմ՝ առաջնորդեցին: Հայերու ներկայութիւնը պահ մը մոռցնել տուաւ ինձի այն հրասթափումը զոր զգացած էի Մարսէյլ ոտք կոխած ատեն:

Միասին այցելեցինք քաղաքին գլխաւոր ծառուղիները և նշանաւոր շէնքերը: Ինքզինքս բարերադղ կը համարէի այսքան անշահախնդիր, այսքան սղզասէր հայրենակիցներու ընկերակցութիւնը վայելելով:

Լա՛ւ հագուած էին անոնք, հետևաբար կենթադրէի որ վաճառականներ ըլլային . . . իսկ իրենց մաքուր անսխալ հայերէնը՝ խիստ բարձր գաղափար մը կը ներշնչէր իրենց զարգացումին մասին:

Մէկ երկու օր միասին ճաշեցինք և իրենք կատարեցին վճարումը, ինչ որ զիս հրախտագիտութեամբ կը համակէր իրենց հանդէպ:

Գիշեր մը, զիս հայկական քլուպ առաջնորդելու հրաւերով . . . խնդրեցին որ կառքով իրենց ընկերանամ:

Մութ էր այն գիշերը և չէի գիտեր թէ ո՛ւր կը դիմէինք: Վերջապէս հասանք ընդարձակ քառուղի մը եզերքը՝ ուր բացարձակ լուութիւն կը տիրէր:

Յանկարծ կառքը կանգ առաւ, և ինձի ընկերացող պարոնները առաջարկեցին որ վար իջնեմ: Ճիշտ այդ պահուն, վտանգի մը նախազգացումը միտքս պաշարեց, անսնտօթ սարսուռ մը զգացի. բայց արդէն յարձակում կը կրէի այդ բարեկիրթ հայերէն՝ որոնք լուութիւն հրամայելէ և սպառնալիքներ ընելէ վերջ՝ խուզարկեցին գրպաններս, ու քսակս և ժամացոյցս

յափշտակելով՝ մթութեան մէջէն անհետացան:

Հիասթափուժն այնքան անակնկալ եղած էր որ բերնէս բառ մ'իսկ չի թռաւ այդ սինդրոնները ձերբակալել տալու համար:

Կողոպտուած էի բոլորովին, բայց ո՞րի կրնայի բողոքել և յետոյ ի՞նչ ամօթ, ազգակիցներէ լարուած թակարթի մը մէջ ինչալ այնքան միամտօրէն:

Չափազանց յուզուեցայ, բարկացայ և տապնապեցայ, սակայն զո՞վ կրնայի մեղադրել եթէ ոչ՝ ինքզինքս որ չարաչար վատահոլութեանս բերումով, այնքան անակնկալ կերպով յարձակոււմ կրած էի:

Ասիկա մեծ դաս մը պիտի ըլլար, մարդաճանաչութեան առաջին դասը՝ որ ինծի վերապահութիւն պիտի սորվեցնէր, այդ դասն միջոցէպէն շնորհիւ . . . :

Տասը վայրկենի չափ դեղեկոտ քայլերով, բառուղիին երկայնքը չափչփելէ վերջ՝ դիչերապահեցողու հանդիպեցայ, պատմեցի անոնց կրած յարձակումս բայց կարելի չեղաւ անոնց գոհացուցիչ լուսարձակութիւններ հաղորդել, քանի որ այդ հայ պարոնները . . . կեղծ անունով ներկայացած են եղբր ինծի:

Դրամ չունէի այլևս, գրեթէ յուզումէս և բարկութենէս լուսացուցի . . . :

Յայտնող օրը, Մարտէլի լայն, գեղեցիկ փողոցնէրուն մէջ թափառած ատեն՝ միտքս ինկաւ լրագրավաճառութիւնը: Ես ալ կրնայի ինչպէս ուրիշներ կատարանները դիմելով կամ քարափին երկայնքը ոտքի վրայ՝ թերթ ծախել, ատկէ դիւրին ինչ գործ կարելի էր երեւակայել:

Սկսայ մտածումս անմիջապէս գործադրութեան գնել, հիմա որ հիասթափուած էի բոլորովին. հետեւաբար ոչ միայն կը ջանայի Ֆրանսա. մեծ օրաթերթերը սպառել, այլ նաև անոնց պարունակած շահեկան յօդ

ուածներու մասին դիտողութիւնները կը կցէի իմ կողմէս ալ աւելի դիւրաւ գրամ շահելու մտադրութեամբ, բան մը՝ որ գոհացուցիչ արդիւնք կ'ուտար:

Լրագրավաճառութեան շնորհիւ՝ բաւական ծանօթացած էի նշանաւոր գրավաճառներու և կարգ մը գրագէտներու հետ:

Այս վերջիններուն մէջ, մանաւանդ խանդավառ երիտասարդ մը կար որ շատ կը համակրէր ինծի Քիչ ատենի մէջ գրեթէ մտերմացած էր հետոս: Ու կ'սկսէր ալ աւելի մեծ հոգածութիւն ցոյց տալ երբ կը տեղեկանար կացութեանս. բայց ես միշտ վերապահ կը մընայի . . . :

Ամիս մը վերջ՝ Բարիկ կը մեկնէի, յոյսի շօրաւոր նշոյլ մը կը ճառագայթէր էութեանս մէջ հակառակ զիս պաշարող անստգութեան, որովհետև կարելի չէր գուշակել ապագային ինծի վերապահած պատահակալութիւնները . . . :

Ամիս մը կար տակաւին համալսարանին բայցման, իսկ ես՝ Բարիկ գալէս իվեր նորէն, ձեռք կառնէի լրագրավաճառութիւնը, Մանաւանդ Gare de Nord-ի մէջ ուր թերթ շատ կը ծախուի: Հեղահեղէն նոր մտածումներ կ'ունենայի, այնպէս որ օտարազգի գրօսուցը ջիկներուն առաջնորդի (guide) դեր կատարելը՝ շահաւոր գրադում մը կը թուէր:

Բազմաթիւ հարուստ անձնաւորութիւններու ծանուայած էի. բայց հակառակ համակրութիւն գրաւելու ջանքերուս բոլոր հանդիպած անձերս ալ բազարձակապէս անտարբեր կը մնային ինծի հանդէպ . . . :

Զիկա՛ր անոնց մէջ մէկը՝ որ ուզէր ինձմով հետանալ քրքուել և բարերար հանդիսանալ:

Ինչո՞ւ այս անտարբերութիւնը, կը հարցնէի իւրովի ամբողջ օրեր խորհելով: Ի՞նչ կ'ըլլար եթէ հայ

բուստ անձնաւորութիւն մը՝ իր շտապ վասնումներուն մէկ մասը, դպրոցական ծախքերուս յատկացնէր . . .

Իբրև Արևելքցի, նախապէս զիս այնպիսի յոյսերով օրորած էի, թէ Եւրոպայիները բարեսիրտ և կարօս ուսանողներու օգնելու արամազիր անձեր են, բայց այս մտածումները Սպանիական զգեսկներու միայն կրնային ծուռնդ տալ . . .

Որովհետև որի որ կը դիմէի կամ մէկուն ո և է առաջարկ ներկայացուցած ատենս, միշտ այնպիսի պատասխաններ կ'ստանայի՝ որոնք բացարձակապէս կը հակասէին իմ ակնկալութիւններս:

Անձնասիրութիւնը Եւրոպացիներուն ծուծը թափանցած ըլլալ կը թուէր, ամէն մարդ կարծես, իր անձնական շահերուն մտածումովը գրաւուած՝ ոչ իսկ վայրկեան մը կը զոհէր իմ տաքնապալի կացութեանս դարման կանգնելու մտքով:

Խիստ անսովոր երևոյթ մը կը թուէր սասիկա ինծի համար, քանի որ անցեալին մէջ բարեացակամ անձերով միայն շրջապատուած էի. բայց հիմա, Ֆրանսա այս ոտտանին մէջ գրեթէ . . .

Ամէն կողմէ անձնասէր, շահամոլ և անտարբեր անձեր կանգնած էին դէմս, այնպէս որ բացարձակապէս անօգուտ էր ուրիշին վստահիլ:

Այս իրողութիւնը թէև դուռն բայց իրապէս խլթան մ'եղաւ յառաջդիմութեանս տեսակէտով:

Ըմբռնեցի թէ օտարին գթասրտութեան վստահելէ աւելի՛ անհրաժեշտ էր կոչում ընել ինքնօգնութեանս, այն մեծ սկզբունքին որ առանցքը կը կազմէ եւրոպական յառաջդիմութեան . . .

Արձակուրդի առթիւ՝ համալսարանին Բրոֆէսորները մեկնած էին օտար քաղաքներ, այնպէս որ կրնայի տակաւին բաւական դրամ չահիլ:

Սեպտեմբերին՝ երբ կրթական հաստատութիւնները իրենց բացումը կատարեցին, ևս ալ ներկայացայ Սօրպոնի նախագահին:

Այդ պահուն՝ սիրտս ուժգին կը տրոփէր, պիտի ընդունէ՞ ին զիս արդեօք. . . հասկա եթէ մերժէ ին. . .

Յաւապին զգացողութիւններ միաքս գրաւելու վրայ էին: Երբ կամքիս ուժով յաջողեցայ հաւասարակութիւն հաստատել մտքիս և զգացումներուս մէջ, ու խաղաղ տրամադրութեամբ՝ քայլերս ուղղեցի Սօրպոնի տեսչաբանը ունկնդրութիւն խնդրելու համար նախագահէն:

Դուռին մօտեցած ատեն, սկիւմայ գող մը սկսաւ սողոսկիլ մարմնէս ներս՝ բայց ինքնաթելադրութեամբ վանեցի զայն:

Երբ ներս մտայ, յիսունը անցուկ կորովի ինքնամիտի և խոժոռադէմ մարդ մը, յոնքերը պոռոտելով՝ ընդունեց զիս, բայց ինչ ընդունելութիւն Աստուած իմ, մարդը բառ մը աւելի մտիկ ընելու ժամանակ իսկ չունէր:

Շատ փափուկ էր կացութիւնս, որովհետև եթէ մանրամասնօրէն սլատմէի կեսնքս՝ թերևս ակամջ չի կախէր. . . իսկ եթէ երկու բառով բացատրիլ ուզէի նպատակս, կարելի չի պիտի ըլլար կոչում ընել իր բարեսիրտութեան:

Հետեւաբար, արտայայտութեան միջին ճամբայ մը ընտրելով, համարձակ շեշտերով պատմեցի ըսելիքս՝ որուն մտիկ կ'ընէր նախագահը նախ խոժոռ. . . յետոյ ժպտուն երևոյթ մ'առնելով:

Ուրեմն յաջողած էի. . . ո՛վ ցնծութեւն, բայց երբ վերջացուցի, այդ նշանաւոր մարդը, չոր շեշտով մը երկու բառով յայտնեց թէ չէր կրնար ընդունել զիս: Շանթահար ըլլալը է՛ն դիւրին բան էր, բայց սո-

կացի հարուածին՝ պահելով պաղարիւհուութիւնս, և նախագահին դարձայ աշխուժիլ՝

— Տէ՛ր, ըսի, հակառակ ձեր մերժումին՝ կոչումիս դրդումը, այնքան ուժգին է մէջս, որ անպատճառ պէտք է օրին մէկը յաշողիմ . . .

Նախագահը՝ դարձեալ ժպտեցաւ, ու ձեռք առաւ իր աշխատութիւնը զոր ընդհատեր էր իմ այցելութեանս պատճառով :

Մեկնելէ առաջ՝ ստացայ վարժարանին յայտագիրը և մտադրեցի լրջօրէն պատրաստուիլ :

Ըսե՛մ թէ երկու ամիս չարաչար աշխատելէ վերջ գերմարդկային ճիգերով և գիշերն ու ցորեկը իրար խառնելով վերջապէս անցք մը բացի իմ առջևս : Անցք մը՝ կամքի, ջանքի, յարատեւութեան և պարկեշտութեան շնորհիւ յարգարուած :

Այս երկու ամսուան տքնութիւններուս պահուն՝ խիստ դանձիկ ժամեր ունեցայ, կրկնակ աշխատութիւն մը կը ծանրանար վրաս, թէ սպրուստ հայթայթելու հոգը և թէ քննութիւններու պատրաստութեան պէտքը : Ու երբ ինձի ծանօթ ուսանողներ՝ հաճոյքներու և երեկոյթներու մէջ կ'անցնէին իրենց ժամանցները, ես՝ խցիկիս մէջ փակուած, գրքերու վրայ գլխիկոր կը սպասէի երկար ատեն :

Ժամեր կային որ չափազանց կը տագնապեցնէին զիս, մանաւանդ յոգնած վայրկեաններուս՝ երբ փողոցին անկիւնէն լսելի կ'ըլլար դաշնակին զուարթ խաղերը. ու երբ մերձակայ պատուհաններէն դուրս սպրդող լոյսերուն մէջէն կ'ընդնմարէի սիրուն գլուխներ՝ որոնք հեշտանքով արբշտ, հիանալի ժամանցներ կը վայելէին. ո՛հ, այն ատեն գիտակցութիւնը կ'ունենայի իմ խղճալի կացութեանս . . . ու չափազանց կը տառապէի : Չէ՛ մի որ ես զրկուած էի այդ բոլոր

պատեհութիւններէն :

Հակառակ, սակայն ներսիդիս գոռացող ըմբոստացումի նոպաներուն, կը ջանայի ստոյիկ մէկու մը նման ինքզինքս մխիթարել, միտքս միշտ դասերուս վրայ կեդրոնացած պահելով :

Թերևս օր մը գար՝ ուր իմ ալ տաժանելի կեանքս տանելի դառնար և իրաւունք ունենայի վայելքներու . . .

Անցաւ այս տաժանելի օրերու շրջանը, հիմա՛ յաջողած էի Սօրպոնի մէջ իբրև ցերեկեայ ուսանող ընդունուիլ որով նպատակիս մէկ մասը գրեթէ կ'իրագործուէր. բայց դրամ մը . . . Ի՞նչպէս պէտք էր շահիլ, քանի որ դասընթացքիս բերումով՝ հարկադրուած էի ցերեկները համալսարանի մէջ փակուիլ առանց կարենալու դուրսէն աշխատիլ :

Յանկա՛րձ նոր մտածում մը փայլատակեց մտքիս մէջ, որ փրկեց զիս տագնապալի կացութենէ մը :

Փիշերները աղլտ էի, կրնայի ուրեմն դրամ չահելու յատկացնել զայն :

Որովհետև պզտիկուց լոխում պատրաստելու կերպը ինձի ծանօթ էր, հետևաբար պարսպոյ ժամերուս՝ սկսայ այս գործով ալ զբաղիլ :

Բայց շատ սաժանելի էր այս գործը, պէտք է ժամերով հանդուրժել կրակին ջերմութեան, և բազուկներու ուժգին հարուածներով՝ հետզհետէ կաթսային մէջի լուծուած շաքարը՝ այնպէս մը խառնել որ նշային հետ անզգայաբար նոյնանար :

Այս զբաղումը Ֆիզիքսպէս չափազանց ընկճեց զիս, այնպէս որ օրին մէկը հիւանդ ինկայ . . .

Շարաթէ մ'աւելի ուժասպառութեան հետևանքով, անկողնիս մէջ գամուած մնացած էի, բայց ո՛չ ոք կայցելէր ինձի, այնքան որ անտարբեր վերաբերում մը ցոյց կուտային ամէն ոք : Ասիկա ալ թերևս եւրո-

պական երևոյթ մ'ըլլայ: Անկողնիս մէջէն կը մտածէի ծնողքիս և քու վրագ, սակայն սուազ որ այդ վերջիչունները աւելի վշտաւիթ տպաւորութիւններ կը թողէին վրաս, այնպէս որ որոշեցի և ոչ մէկ պարագայի տակ՝ այլ ևս հին յիշատակներ չի քրքրել:

Երբ բողոքովին ապաքինեցայ, նոր թափով մը սկսայ յարատեւել:

Իրիկունները համալսարանէ վերադարձիս՝ կրնայի Պուլվարներու կողմը, բաւական գոհացուցիչ վաճառումներ յաջողցնել:

Բայց ասիկա չէր բաւեր, պէտք էր ուշադրութիւն գրաւելու նոր կերպեր մտածել:

Կարելի չէ՞ր արդեօք, կը խորհէի գրքոյկներու հրատարակութեամբ՝ քիչ մ'աւելի դրամ շահիլ: Դրամ՝ որ հիմա, ամէն բանէ աւելի, անհրաժեշտ պէտք մը դարձած էր ինձի համար:

Մտածումս շահեկան կը թուէր, հետև սրար խկոյն գործի սկսայ հրատարակութեան տուող առաջին գրքոյկս, հետևեալ վերտառութեամբ՝

— Մոլութեան և առաքինութեան հետքերը՝ դէմքին վրայ:

Ուրախութիւնս չափ չունէր այս առաջին հրատարակութեան առթիւ, բայց չուտով զսպեցի զայն ու է յուսախարութեան չի մասնուելու միակ մտածումով:

Ճիշդ գուշակածիս պէս՝ այս գործը թէև զարգացած շրջանակներու ուշադրութեան արժանացաւ՝ բայց ինձի վնաս պատճառեց նիւթական տեսակէտով և սակայն չի յուսահատեցայ:

Երկաթէ կամք մը կ'առաջնորդէր զիս նոյնիսկ է՛ն տազնապալի վայրկեաններուն: Կրկնեցի փորձս բայց այս անգամ՝ աւելի գործնական եղանակով մը:

Երկրորդ գիրք մը՝

— Կիներուն սիրտը ճանչնալու գաղտնիքը —
Աւելի շահեկան՝ ո՛չ միայն փոխարինեց առաջին վնասն, այլ նաև հաստատ կոուանի մը վրայ գետեղեց նիւթական կացութիւնս:

Այնուհետև բարձր շրջանակներու մէջ կրնայի մուտք գործել, ուշադրութիւնը գրաւելով մանաւանդ շահեկան անկիւններու՝ որոնք ինձմով հետաքրքրուած կը թուէին . . .

Այս պարագան ո՛չ միայն քաջալերական էր այլ նաև՝ առաւելութիւններն ալ կրկնապէս ցայտուն էին: Նախ որ ինքնաշխատութեամբ իրագործած էի նպատակս և յետոյ մեկենասի մը երախտապարտ մնալու խղճի խայթէն կ'ազատէի:

Ս'յդ օրն կ'սկսէր յաջողութիւններուս շարքը: Աւթրէտ Պինէ բացառիկ հաճոյակատարութեամբ՝ թոյլ կուտար ինձի հետեւի իր աշխատանոցի փորձերուն ու տարի մը վերջ՝ կը հաճէր իր անձնական քարտուղարը ինձի մէկը. ո՛հ անմոռանալի՛ օր, նշանակել զիս, և օրին մէկը. ո՛հ անմոռանալի՛ օր, վկայագիրս գրպանելով՝ նախագահին շնորհաւորութեան կ'արժանանայի, այն նախագահին՝ որ մուտքի օրերուս՝ այնքան խոժոռ վերաբերում մը ունեցեր էր ինձի հանդէպ:

Այսպէս տօրիներու ընթացքին մէջ, տաժանելի տքնութիւններու, Երբեմն դառն յուսախարութիւններէ երբեմն ալ անտկնկալ յաջողութիւններէ վերջ՝ կամքի և սովորութեան շնորհիւ կը հասնէի խաղաղ կամքի և սովորութեան շնորհիւ կը հասնէի խաղաղ հանգրուանը՝ որ իմ հեռանկարս եղած էր, և որքան ուրախ էի կարենալ սովորու համար այն բոլոր զբոսանքներուն՝ որոնք կեանքի մեծ դասը սորվեցուցին ինձի, փորձառու ըրին զիս:

Ալ այնուհետև կրնայի հանդարտ սրտով հետապնդել սուշադրած նպատակս, ու ամէն անգամ որ յե-

տաղարձ ակնարկ մը նետէի անցեալի վրայ, անխառն հպարտութիւն մը կը գրուէր հոգիս. որովհետեւ ինքնավստահութեան կը պարտէի յաղթանակս . . . :

Ջղային և մտաւոր հիւանդութիւններու մասնագէտ էի այլ ևս և ահա այդ օրերուն էր որ՝ մագնիսականութեամբ ալ հետաքրքրուեցայ իբրև լրացուցիչ մասը իմ հետեւած ճիւղիս:

Անսիջապէս նիւ-ծօրք մեկնեցայ՝ ուր կրցի հետևելի ֆօլըմպիա համալսարանին հոգեբանական դասընթացքին, նաև ուսումնասիրել նշանաւոր մագնիսագէտ—Բրօֆ. Քուիրըմպօսի քնէածական փորձերը՝ որոնք այնքան շահեկան էին:

Պահ մը լռեց Գեղամ, սիկառ մը վառեց և խօսքը շարունակելով— կը տեսնե՞ս յարեց. ո . . է յաջողութեան գաղտնիքը կը կայանայ զգացումները մաքին հակակշիւն ենթարկելուն մէջ:

Մարդ ո՛չ չափազանց ուրախանալու ո՛չ տրտմելու. ո՛չ յուսահատիլ և ո՛չ ալ յոռետես շանաչու է: Իր զգացումները տիրապետող և ինքնավստահ մեկուն համար. յաջողութիւնը էն դիւրին գործն է, այո՛, անխուսափելի յաջողութիւնը անպատճա՛ռ պիտի փոխարինէ իր ջանքերը . . . :

Այս խօսքերը ելեկտրական հոսանք մը քաղեցուցին ջրդերուս մէջ:

Ճաշի գանգակը կը զարնէր որու վրայ սրահ (salon) փութացինք:

ՊԼՈՒԽ Պ.

ՅԱՌԱԶԴԻՄՈՒՅԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ՆԵՐԿԱՆ

ԿԱՄ

ՄԱԳՆԵՍԻԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Վարը՝ ելեքտրական լոյսերը կողողէին սրահը՝ որ իր ստացած պայծառութեան շնորհիւ, հրապուրիչ տեսք մ'առած էր: Սեղաններուն վրայ, ճաշի սպասները զետեղուած էին արդէն և թարմ կերակուրներ պարունակող նիւթելէ փայլուն ամաններուն եղերքէն շողիի նուրբ ոլորտներ կը սպրդէին գուրս:

Ջուրի դաւաթները, գինիի շիշերը, պնակները, սպիտակ սփռոցները և յարակից ստարկաները այնքան կանոնաւորութեամբ զետեղուած էին որ ճաշակի ճըլմարիտ զուգարութեամբ կ'օժտէին սեղանը:

Տեղ, տեղ նկարագեղ թաղարներէն, կանանչի փունջեր կը կախուէին անփութօրէն, իսկ թաւշապատ թիկնաթուռները, չնարակուած պատուհաններն ու պատերուն վրայ երևցող փելզանկարները՝ սքսնչելի պէսպիսութիւն մը կը կազմէին լիւքսի այս առարկաներուն մէջ:

Մեղի հետ սեղանակից էր Ա. նուսպետը ու գիրուկ, կարմիր դիմագիծերով՝ համակրելի մարդ մը, որուն քով շնորհալիօրէն նստած էր թարմագեղ, հրապուրիչ կին մը, նաև երկու զինուորականներ կային համազգեստ հագած:

Բարեկամս իր յիշատակներուն մէջ այնքան խորատուզուած կը թուէր որ թերևս նոյն իսկ ուշագրու-

թիւն չէր ըրած չորս բոլորափքը:

Ի՛մացի կինը, որուն զիմագիծերը ելեքտրական լոյսէն աւելի պայծառացած կերեէին, չէր ուշացած սակայն վայրկենաբար մեզ աչքէ անցնելու բայց այնքան նրբութեամբ և անտարբերօրէն կը դիտէր որ խիստ դժուար պիտի ըլլար նշմարել:

Այդ՝ անծանօթ կինը, առածին տեսակցութեամբ իսկ՝ բուռն համակրութիւն մը ներշնչած էր ինձի, որ հետզհետէ աւելի կ'արծարծէր իր գեղեցկութեան հմայքին տակ: Ի՞նչ բան ինելայեզ կ'ընէր զիս, այդ վայրկենին, ինչո՞ւ ներքին անդիմադրելի անհուն կարօտով մը կը լեցնէր սիրտս, մոգական ի՞նչ զօրութիւն ունէր ան որ գերի կրնէր զիս իր հմայքին՝ նոյն իսկ նայուածքի զօրութեամբ . . . :

Մոռցա՛ծ էի այլ ևս ճաշը և հոգիս գրեթէ ելեքտրականացած՝ գրաւուած կը մնար այդ սեղանակից կնոջ պչրանքին:

— Տէ՛ր Աստուած, կը կրկնէի մտահոգութեամբ, ես՝ որ տարիներով անզգայ կեանք մ'ապրած էի, ի՞նչպէս կըլլայ որ հիմայ, վերստին կը գիտակցէի նուրբ զգացողութիւններու՝ արդեօք գեղարուեստական հանուններս ըմբոստացա՞ծ էին ինձի դէմ... Զարմա՛նք:

Կը մտադրէի նոյն պահուն իսկ, ծանօթանալ, մտերմանալ այդ կնոջ հետ, հազորդելու համար իրեն հանդէպ զգացած անդիմադրելի համակրանքս, այնպէս որ, այդ վայրկենին իսկ ինքնաբերաբար՝ ժպտով մը կ'ողջունէի անոր գեղեցիկ նայուածքը, որ պատահաբար իմ կողմս ուղղուած էր:

Բայց ո՞վ յուսախարութիւն, յանկարծ սեղմու՞մ մը զգացի հոգիս մէջ, որովհետև հաղիւ թէ ժպտիլ սկսած էի՝ երբ կնոջ դէմքին վրայ արհամարհանքի ցուրտ արտայայտութիւն մը նկարուեցաւ, այնքան

ուժնգնօրէն՝ որ սրտիս մէջ կարծես սուր մը մխեցին . . . բայց ինչո՞ւ այդ արհամարհանքը, ինչո՞ւ, այո՛, իմ խանդավառութեանս փոխարէն, այդ ցնորեցնող անտարբերութիւնը . . . :

Ըսի՞նք թէ չէի ճանչցած տակաւին կնոջ սիրտը սուած գնդանիքը:

Ճաշը վերջացածին պէս՝ Գեղամի հետ վերջնայարկ փութացինք: Հիանալի լուսընկայ գիշեր մը կ'ընէր, պարզ, անամպ գիշեր մը, որ պայծառացած էր լուսնի: Նշոյններովը, Սամբոջովին արծաթազօծած էր ծովը, որուն վրայէն շագնաւը, կանոնաւորաբար կը յառաջանար դիմացի ծովեզերքին հետեւելով:

Երկուքս ալ նստած՝ պահ մը անխօս կը դիտէինք հեռուէն ու մեր ակնարկները՝ կը մխրճէինք մթութեան մէջ, որ ալ աւելի խորհրդաւոր կերևէր այդ լուսընկայ գիշերը:

Մի՛տքս յաւազին մտածումներու ենթարկուած էր, իսկ գելու հին թիովքն ու իր ցուրտ, խորխտ վարմունքը, պարզապէս լալու արամադրութիւններ կ'արթնցնէին իմ մէջ:

Պէ՛տք էր չսթափիլ՝ և մտքէս վանել, տիրութեան այս շարժառիթները:

Նոյն վայրկենին՝ վերլիչելով բարեկամիս յորդորները, ջանացի զսպել զգացումներուս ասկանոն ընթացքը, և Գեղամի խօսակցութեան անդրադարձած պահուէս, սիտքս ինկուէ մազնիսակոնտութիւնը, աղւոր նիւթ մ'է՛ որ թերևս դիւրաւ իրեն գրաւէր մտածումներս:

Գեղամ՝ նոյն վայրկենին ակնարկը երկինք ուղղած՝ կը մըմնջեր հիացումով:

— Ի՞նչ աղւոր գիշեր, հաւին վերնայարկին վրայ՝

որքան խորհրդաւոր վայրկեան մը կ'անցնենք...

Ճի՛շդ ատենն էր:

— Այո՛, պատասխանեցի, բայց կարելի չէ՞ որ արդեօք, այս պատեհութեամբ՝ բացատրես ինձի մագնիսականութիւնը, որուն ակնարկած էիր քիչ առաջ:

— Ինչո՞ւ չէ, սիրով, յարեց Գեղամ սիկարը վառելով՝ որուն վրայ սլահ մը լուսթիւն տիրեց:

Նաւին վերնայարկին վրայ՝ մեզնէ զատ ոչ ոք կ'երևէր: Թարեկամս խօսքը շարունակելով՝

— Ըսելիքներս կ'ընդգրկեն աւելցուց, մարդուն «կատարած և կատարելիք» յառաջգիմութեան պատմութիւնը:

Իմ մասնագիտութեանս որոշ կերպով թափանցել կարենալու համար՝ տնհրատեչտ է, ակնարկ մը նետել, մարդուն անցեալ և ներկայ կեանքին և այդ կացութեան հարկադրուած պայմաններուն վրայ, որոնց վրայ հիմնուելով միայն, կարելի է հասկնալի ընել այս նիւթը:

Յառաջգիմութեան սկիզբը գտնելու մտքով, դէպի հին դարեր ակնարկ մը նետելով՝ կը տեսնենք թէ նախապատմական մարդը, խիստ անպաշտպան էակ մըն էր, և իր անդաստական կեանքով, ոչ միայն կենդանիներէն հալածանքի կ'ենթարկուէր, այլ նաև կը ստակար բնութենէն և այն բոլոր երեւոյթներէն՝ որոնք սարսափ կ'ազդէին իրեն:

Իր անօգ վիճակը, ապրելու պէտքը, ինչպէս նաև ներքին բաղձ մը, առաջնորդեցին զինքը, թափառական վիճակէն, դէպի ընկերական կեանքը, որու շնորհիւ մարդ փոխանակ մեկուսացած մնալու սկսաւ ընկերակիցներու հետ ապրել, և այսպէսով՝ ծագում առաւ ընկերականութիւնը:

Այս նոր կեանքը, բարբարոսական շրջաններէն ըս-

կըսելով, հետզհետէ յաջողեցաւ օգտուել մտքին ուժերէն, որոնց շնորհիւ երևան եկաւ քաղաքակրթութիւնը:

Աստիճանաբար, կրօնքի, գիտութեան, արուեստի և գեղարուեստի սաղմնային յառաջգիմութեան հետքերը սկսան նշմարուել որոնց կազմակերպութեան դրօշ մը տուաւ հռովմէական կայսրութիւնը:

Քրիստոնէութեան երևումով՝ հոգին աղարտող մուսթիւններն ու կիրքերը, թօթափեցան իր բարձր գիտակցութենէն և նոր լոյս մը սկսաւ ծագել առաքինութեան շաղին մէջ: Բայց Քրիստոնէութիւնն ալ իր կարգին, մանաւանդ սխալ հասկցուած Քրիստոնէութիւնը՝ ակամայ տեղի տուաւ մեծամեծ գեղձումներու, կապտելով իմացականութեան թափը և ամբողջ տասնը հինգ դարեր կասեցնելով գիտական յառաջգիմութեան հոսանքը:

Ինչ մեծ ոճիր և ինչ անեղ կորուստ . . .

Այս անուսինթաց շրջանը, ո՛վ գիտէ, իր բնական ընթացքին մէջ, ինչքան բեղմնաւոր պիտի ըլլար մարդկութեան յառաջգիմութեան տեսակէտով, մինչ՝ խաւարով շրջապատուած կը գտնենք զայն:

Գիտութիւնը, սխալ լմբոնուած կրօնի կապանքներն անգամ մը թօթափէլէ վերջ՝ մարդուն միտքը առաջնորդեց բնութեան հետախուզութիւններուն՝ առարկայական (objective) հիման վրայ:

Հետզհետէ ուշագրաւ իրողութիւն դարձաւ բարելոթեան տեսութիւնը:

Գիտութիւնը նոր թափ տուաւ վաճառականութեան և ծնունդ առաւ ճարտարարուեստը, որոնց շնորհիւ, մէկ կողմէ հաղորդակցութեան միջոցները գիւրացան, երկաթուղիի, շոգեմաւի, հեռագրի և հեռաձայնի գիւտերով, միւս կողմէ երևան եկաւ «մըր-

յուժի» պէտքը:

— Յառաջգիմութեան այն գերագոյն խթանը՝ որ իր չարիքներուն հետ, լաւագոյն կազմակերպութեան պատճառ հանդիսացաւ:

Մրցումի գաղափարը հաստատուած էր յարմարագոյնին, ապրելու տեսութեան (survival of the fittest) վրայ:

Ա՛րդ, անոնք միայն իրաւունք կը ստանան յաջողելու, որոնք որ լաւագոյն կերպով պատրաստուած են:

Լաւագոյն պատրաստութիւնը իրեն հիմ ունի գաստիարակութիւնը, և ահա, ա՛յս վերջին ոյժն էր որ երևան պիտի բերէր մարդուն թէ տկարութիւններն և թէ զօրութիւնը:

Դաստիարակութիւնը շատ լաւ մեթոտ մ'է մարդկութեան բնականոն (Normal) տարրերը ուղղելու տեսակէտով, բայց անդին կայ անկանոն մոլի և տկար էակներու ստուար զանգուածը՝ ինչ պէտք էր ընել, ահա հրատապ հարց մը որ լրջօրէն կը զբաղեցնէր մարդկային միտքը:

Հոգեբանական հետախուզութիւնները, այս խընդիրն ալ լուծեցին, պարզելով մագնիսականութեան երևոյթները որոնցմով միայն կարելի կըլար ցոյց տալ մարդուն մեծութեան գաղտնիքը, և իր տկարութիւնները դարմանելու եղանակը:

Ի՞նչ է սակայն մագնիսականութիւնը, բացատրենք:

Այս մասին, բաւական պատշաճ սահման մը պիտի ըլլար ըսել թէ, մագնիսականութիւնը հոգիին այն վիճակն է՝ որ մարդուն երկուորական (Dual) բնութիւնը կը յայտնէ:

Մինչև հիմա մարդուն կեանքէն ծանօթ էին, արթուն և քուն վիճակները, բայց մագնիսական գիտու-

թիւնը «երրորդ» վիճակի մը գոյութիւնն ալ կը հաստատէ:

Այսինքն այն՝ որուն միջոցին մասամբ քուն մասամբ ալ արթուն կը մնայ, ո և է անհատ: Արթուն վիճակի մէջ՝ մարդ գիտէ թէ ինչ կ'ընէ —

Գիտակցութիւնն է այս Գունի պարագային չի գիտեր թէ ինչ կ'ընէ, ասոր ալ անգիտակցութիւն կ'ըսեն. իսկ մագնիսացած վիճակին մէջ մարդ կը գիտնայ, կը զզայ, կը գործէ ինչ որ մագնիսացնողը պահանջէ—

Ենթագիտակցական վիճակ:

Ջարմանալի չէ՞ այս երրորդ երևոյթը. վիճակ մ'է ուր՝ կրկայ, կը մտածէ, կը գործէ առանց իր կողմէ ո և է գիտակցութեան:

Այս երկուորական բնութիւնը (duplex personality) ցոյց կուտայ մարդուն մէջ հունաւոր և անհուն ուժերու գոյութիւնը և ահա ատենց շնորհիւ է որ հոգիի անմահութեան գաղափարը դիտական կուտան մը ձեռք կը ձգէ:

Կրկնակ անհատականութեան տեսութեան շնորհիւ է նաև որ մարդուն մէջ երկու «Ես»երու գոյութիւնը հաստատուած է, իրողութիւն մը՝ որ ոչ միայն գիտապէս և գործնականապէս ընդունուած է այլ նաև ծանօթ էր մեր նախնիքներուն ալ:

Յիսուս՝ Գեթսեմանիի պարտէզին մէջ. «հոգիս յօժար է բայց մարմինս տկար» բացատրութեամբ իր մէջ գործող երկու «Ես»երուն ակնարկած էր:

Արդ, այս երկու «Ես»երէն Ա.ը այն է որ՝ մեր առօրեայ գործունէութեան մէջ կը յայտնուի, այնպէս որ երբ կը խօսինք, կը գրենք, կամ կը մտածենք ու կը գործենք, ինքնաբերաբար՝ Ա. այսինքն ստորին «Ես»ին զրգուձեցնուն տեղի առած կըլանք. բայց

պարագաներ կան ուր մարդ ինքզինքը, անձանօթ նոր ուժերով օժտուած կրկայ, կարծես ներքին խանդավառութիւն մը կը մղէ զինքը՝ բարձրագոյն գործունէութեան:

Ինքնատիպ մտածումներ ծնունդ կ'առնեն իր մէջ և գերագոյն լուսատեսութիւն մը, յաջողութեան յոյսեր կ'աւետէ իրեն, այնպէս որ ինք ալ կը գիտակցի, իր մէջ արթնցող նորագոյն բնագոյններուն:

Իր կեանքին մէջ, ո՛վ չէ զգացեր այս կարգի հոգեբանական երևոյթներ:

Երբեմն քարոզ մը կամ ընտիր գրքի մը ընթերցումը կամ բնական հիանալի տեսարաններու թողած խորհրդաւոր տպաւորութիւնը օրերով գրաւած չէ՞ մեր միտքը, կամ Մեծ մարդու մը ներկայութիւնը տարօրինակ ազդեցութիւն մը չէ՞ թողուցած:

Ի՞նչ բանի վերագրինք համակրանքի այն բուն հոսանքը որ մեր մէջ ինքնարեւարար արթնցեր էր...

Հոգեբանութիւնը ցոյց տուած է որ, այդ զգացողութիւնները բարձր «Ես»ին ինքնարեւարար կատարուող արտայայտութեան արդիւնքներն են:

Արդ, քանի որ այդ բարձր «Ես»ը ինքնիրեն կրնայ երբեմն պարագաներու տակ յայտնուիլ, կարելի՞ չէ՞ր արդեօք արհեստական եղանակ մըն ալ գտնել, որով շահագործուէր այս հիանալի ոյժը՝ որ անհունին հետ հազորդակցող և մեզի նորանոր հորիզոններ առաջնորդող «Ես»ն է:

Այն «Ես»ը որ Ս. Գիրքին մէջ ալ Աստուծոյ պատկեր անունով յիշատակուած է:

Մարդուն մեծութիւնը հոն է որ, յաջողեցաւ սահմանափակ հունաւոր միջոցներով սանձել և շահագործել այս անհուն ոյժն ալ: Ինչպէս, գիտե՞ս, պարզապէս մագնիսական քունի շնորհիւ, որով կարե-

լի եղած է ազդել բարձր «Ես»ին:

Ինծի այնպէս կը թուի որ մագնիսական քուն բացատրութիւնը, շատ խորհրդաւոր տպաւորութիւն մը պիտի ընէ առողջին անգամ լսողներուն վրայ՝ որոնք կատարեալ նուսապաշարուածով, հրաշալի զօրութիւն մը պիտի սեղէին վերագրել անոր:

Մագնիսական քուն յառաջ բերելու կերպը, այնքան անհավատալիօրէն դիւրին է որ, մարդ չկրնար երևակայել թէ, իրօք այդքան ծանրակշիռ երևոյթներով յղի այս երևոյթը՝ շատ պարզ միջոցներով կարելի ըլլայ յառաջ բերել:

Անոնք որ առանց գործնական փորձերու ականատես ըլլալու՝ լոկ գիրքերու միջոցաւ կամ ինքնաշխատութեամբ կ'ուզեն սորվիլ քննածութեան զազանիքները, յաճախ այն համոզումին կը յանգին թէ՛ խաբէտութեան մը զոհերն են իրենք, մինչ մագնիսականութիւնը կայ և կը գործէ . . .

Վայրկեան մը լռութիւն տիրեց:

Լուսինը պահ մը ամպերով շրջապատուեցաւ, քողարկելով իր արծաթապատ սկաւառակը, մինչ՝ ծովին երեսէն յանկարծ անհետացան այն նուազուն նշոյնները որոնք ալիքներուն վրայ կը խաղային: Շոգենաւր մութին մէջէն կը յառաջանար դէպի Կիրասուն:

Այդ պահուն, կարեւոր շարք մը կը գրաւէր միտքս:

Ի՞նչպէս, կարելի պիտի ըլլար մագնիսական քուն յառաջ բերել. պէտք կը զգայի այս մասին ալ բարեկամիս նաբցում ուղղել՝ որուն Գեշամ, կատարեալ հաճոյակատարութեամբ փութաց պատասխանել:

— Արհեստական քուն յառաջ բերելու համար՝ յարեց բարեկամս, նախ պէտք է ենթակային, այսինքն մագնիսացող անձին վստահութիւնը գրաւել, և անոր մտահոգութիւնէ վերջ մէկ պահուն՝ հրաւիրելու է ու-

չադրութիւնը կեդրոնացնել վայլուն առարկայի մը, օրինակ բիւրեղի կտորի կամ գոհարեղէնի վրայ զոր ենթակային աչքերէն քիչ մը վեր, այնպէ՛ս մը բռնելու է որ, շուտ յոգնի անխարթ աչքերով նայիլ ստիպուելէն: Այս կերպով, պէտք է հինգէն մինչև քուսասան հինգ վայրկեան մը շարունակել, մինչև որ մագնիսացողին աչքերը սկսին ջղաձգօրէն գոցուիլ ու բացուիլ մինչև որ հասնի պահ մը՝ ուր անկարելի ըլլայ ակնարկը առարկային վրայ սեւեռած պահել:

Ճիշտ, այդ պահուն՝ քնարեր թելադրութիւններ ընելու է մինչև որ ենթական կորսնցնէ գիտակցութիւնը և մտածելէ դադրի:

Մագնիսացած անձի մը տրուած թելադրութիւնները, այսինքն, բերանացի պատուէրները, տարօրինակ կերպերով բարձր «Ես»ին վրայ դրօշմուելու յատկութիւնն ունին, այնպէս որ մոլի, անբարոյական և կիրքոտ անձերուն տկարութիւնները բուժելու համար, կը բաւէ քուն վիճակի մէջ իրենց ըսել թէ, բժշկուած են այլևս, թէ՛ ոչ մէկ պարագայի տակ, ուրիշ աութիւ՛ տեղի պիտի տան նախկին մոլութեան ևն:

Այս կերպով, կարելի է նաև կամքի ոյժ, յարատևութիւն, կեդրոնացում, մտամոխրում, կամ ուղւած ու է մտաւոր կամ բարոյական յատկութիւն ներարկել ու է մէկին, կը բաւէ որ թելադրութիւնները յատակ կերպով բանաձևուած ըլլան, և արտասանուին համոզուած շեշտերով:

Դարձեալ լուծիւն տիրեց, տախտակամածին վրայ մեզմէ զատ ոչ ոք մնացած էր:

Լուսինը, ամպերու հալածանքէն ազատագրուած հիմա, իր գեղեցիկ նշոյնները կ'արձակէր մեղամաղձու պայծառութեամբ ու ծովը կը սարսուար իր ցլ՛քերէն գեղեցկացած:

Միտքս թէև մագնիսական տարօրինակ երևոյթնեւրուն կ'անդրադառնար՝ բայց տեսակ մը անխնայութեան առտութեամբ կը կասկածէի քնէածուծեան հրաշալի արդիւնքներէն, ասկէ զատ՝ նոյնիսկ անկարող կը զգայի խորհելու, որովհետև զգացումներս որոնք դարձեալ ուղեղս խուժած էին, կ'որգիւէին միտքիս՝ անմոխրումը մէկ կէտի վրայ անբացատրելի անհանգստութիւն մը բերելով միտքիս մէջ, որուն շարժառիթը անձանթ կը մնար . . . :

Յանկարծ մեր մօտիկէն, ոտնաձայներ լուեցան և անուշահոտ բուրում մը ծաւալեցաւ չորս կողմը: Զգլխիչ բոյր մը՝ որ խորհրդաւոր ձգողութեամբ, տարօրինակ թմրութիւն մը կ'ազդէր:

Ակնարկս ոտնաձայնին կողմը ուղղեցի և լուսնկայ պայծառութեան մէջ՝ տեսայ, գեղեցիկ կինը որ հեշտանքով ծովը կը դիտէր:

Սրտառուչ, տարօրինակ տեսարանի մը հանդիսատես կ'ըլլայի, խորհրդաւոր տեսարան մը ուր՝ արծաթ լուսինը, միապաղաղ ծովը և պաշտելի կինը կը մըրցէին գեղեցկութեամբ:

Ինչ տարօրինակ բաղդաւորութիւն էր այդ երեքին ալ հմայքը մանաւանդ հոտ շոգեմալին վերնայարկին վրայ, երբ գլխուղ վերև աստղերը խորհրդաւոր ակնարկներ կը քթթին, ու վարն ալ՝ ալիքսերը կը սարսուան արծաթ գիծերով:

Դադրած էի այլևս, բարեկամիս խօսակցութեան անդրադառնալէ: Իրական մագնիսականութիւնը ճիշտ դէմս էր որ տեղի կունենար:

Ինչ բան կրնար արդեօք ինձի աւելի հաճոյք պատճառել քան այդ խորհրդաւոր պահուն՝ պաշտելի կնոջմէ ալ աւելի պաշտելի յափշտակութիւնը:

Ինչօ՛ւ նկարիչ մը չէի ծնած յաւերժացնելու հա-

մար այդ տեսարանին յիշատակը:

Լուս էի այդ վայրկենին, այո՛, լուս, բայց երբէք ուրիշ ատեններ, այդքան զեղուն զգացումներ չէին բունկոյտ ցած երևակայութիւնս: Խօսելէ աւելի հիանալու արամադրութիւններ կը զգայի և պաշտանքի զօրաւոր զղրղիւն մը հոգիիս մէջ աննկարագրելի տենջանքներ կ'արթնցնէր:

Ինչ բան էր ատիկայ... արդեօք բարեկամիս ըսածին նման, բարձր «նս» ս ինքնարեքարար կը թրթրուա՞ր այդ մագնիսացնող կնոջ հմայքին տակ:

Որքան երջանիկ մէկը եղած պիտի ըլլայի, եթէ երբէք այդ գեղանի կինը հաւանէր, այո՛, գէթ վայրկեան մը արտօնէր զիս, հետը խօսելու, արտայայտելու համար սքանչալուսմս:

Յանկարծ ան՝ իմ կողմս դարձու, ուշի ուշով զիս դիտեց, ու մեզմ քայլերով՝ դարձեալ խցիկ իջաւ, մեզ առանձին թողլով, գոգցես նախանձեղուն համար այն հաճոյքին զոր պարգևեր էր այնքան վեհանձնօրէն...:

Ճի՛շտ, այդ վայրկենին կարծես խաւարչուտ մշուշ մը պատեց հոգիիս մէջ, անբացատրելի մեղամաղձոտութեան մը հեքը դնելով հոն, ու ներքնապէս լացի, լքուածի և կարօտակէզ մէկու մը աղի արցունքներովը՝ որոնք սիրտս կ'արիւնէին:

Անկարելի էր այլ ևս տոկալ, այս անտանելի կացութեան:

— Ելլենք, ըսի Գեղամին, ու միասին վար իջանք, սրահ՝ ուր բացարձակ ամայութիւն կը տիրէր, խակոյն խցիկ քաշուեցանք, բայց ինծի համար կարելի՞ բան էր քնանալ...:

Ժամերով, գրգռուած երևակայութեամբ, թաւալեցայ անկողնիս մէջ, կարդալ փորձեցի, ջանացի ամփոփել միտքս, և սակայն ոչ մէկ փորձ կարող եղաւ:

ինծի պարգևելու այն անզգայութիւնը որուն քուն կըսեն:

Միշտ այդ գեղանի կնոջ չքնաղ դէմքը, միշտ անոր հրապուրիչ արտայայտութիւնն էր որ կը ցցուէր երևակայութեանս առջև...:

Սրահին ժամացոյցը կէս գիշեր կը վարնէր, երբ ջլատուած և անզգայացած՝ քունը կուգար փակել աչքերս:

Պառկայոյց գիշեր մը անցուցի և առտուն շատ ուշ՝ Գեղամի մատնահարութեան և դուռը ցնցելուն շնորհիւ էր որ կ'արթննայի սալած, լիմրած, վիճակով...:

Կիրասօն կը հասնէինք:

ՊԼՈՒԽ Փ.

ԱՊԱԳԱՅ ՅԱՌԱՋԴԻՄՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԱՍ

ՈՒՂԵՂԱԶՍՓ ԳՈՐԾԻՆ

Իրիկուան թմրութիւնը տակաւին՝ կը ծանրանար ուղեղիս վրայ:

Գեղամի հետ՝ վեր, կոմքշակ փութացի ուր ճամբորդները հաւաքուած էին, զխոսելու համար նաւավարներու տենդոտ գործունէութիւնը, որուն ոչ մէկ տեղ կարելի էր հանդիպել:

Սրարչու հաւակներու իտելայեղ մրցումը այնքան հաճելի տպաւորութիւն մը կընէր վրաս, որ կը մոռնայի իրէկի ցաւատանջ մտածումներս:

Նախաճաշէն վերջ՝ բարեկամիս հետ ցամաք ելանք
և շուկայէն անցնելով՝ ծովեզերքին ուղղութեամբ
տարածուող քարափին վրայ կանգ առինք:

Մեր դիմացը, թերակղզիի ձևով ցից բերդ մը կը
բարձրանար, և բարեկամս անդիմադրելի փափաք մը
կ'զգար ղէպի անոր գագաթը վերելք մը կատարելու:
Բառորդի մը հաճելի միեւնոյն ատեն տաժանելի
մագլցումէ վերջ, կը հասնէինք պարիսպներուն եզեր-
քը ու բերդէն ներս մուտք կը գործենք. կանանչ տա-
րածութեան վրայէն յառաջանալով:

Հիանալի վայր. սքանչացումով կը դիտենք վարը
միապաղաղ ծովը՝ որ իր ծալքերուն մէջ, խորհրդա-
ւոր կապոյտ մը կը պարզէ:

Արեւը հետզհետէ լոյսով կ'ողողէ հեռուոր կանան-
չագարդ ծոցերն ու հրուանդամները և զմայելի ե-
րանգներ կուտայ դիմացի գեղատեսիլ կղզեակին, որ
իւր շքեղ մեկուսացումին մէջ, այնքան հրապուրիչ կը
թուի: Ամբողջ ծովը, հրաշքէ կ'իջնուի ոսկեգօծուած
կը թուէր: Իսկ թափանցիկ երկնակամարը՝ որ հեռուն
հորիզոնին հետ կը գերկընդիստանէր. կը յափշտակէր
մեզ պարզապէս:

Ժամերով դիտեցինք այդ հիանալի տեսարանն.
լուռ պաշտամունք մը կատարեցինք բնութեան այդ
զմայելի գեղեցկութեան և տխրութեամբ հեռացանք
այդ չքնաղ վայրէն, որ իր ծոցին մէջ կը խսացնէր
կարծես էն ազուոր տեսարաններու հմայքը:

Մեր վերադարձին՝ հազիւ քանի մը վայրկեան
կանգ առինք քաղաքին մէջ ու քարափէն անցնելով
նաւ վերադարձանք:

Կէս ժամ վերջ՝ նաւը կը մեկնէր արդէն. Կիրասո-
նէն, անտես կ'ըլլար բերդը՝ որ այնքան անջնջելի
սպաւորութիւն մը թողած էր մեր վրայ:

Գեղամի հետ դարձեալ ընկողմանած էինք մեր
աթոռներուն մէջ՝ դիտելով զիմացի գեղածիծաղ ծո-
վեզեր:

Նաւին հսկայ անիւր կ'ելեքտրականացնէր ջուրի
զանգուածը, պղպջացող ջուրերուն հեծեծանքը մեզի
կ'օրօրէր տխուր մելամաղձտութեամբ, մինչ նաւը
կը յառաջանար վոնս հրուանդանին ուղղութեամբ
հազիւ մեղմօրէն ցնցուելով:

Դիմացը, ցամաքին կողմէ, թուփերու և գաճաճ
ծառերու հարուստ շարքը, և աչք պարուրող կանան-
չութիւն մը, ակնապարար տեսարան մը կը պարզէին:

Նրբեմն ծովին ողորկ մակերեսին վրայ յանդուգն
թլփինները, դուրս կը ցցէին իրենց սրածայր ձեռքը,
ղէպի մեր կողմը ճախրերով, և կը մխրճէին, կ'անհե-
տանային ջուրին մէջ, կատաղի մրցում մը մղելով
նաւին սրը՝ թացութեանը դէմ:

Միտքս բաւական հուստարակշուած կը թուէր
հետևարար կրնայի խնդրել Գեղամի, որպէս զի շա-
րունակէր, մագնիսականութեան մնացորդ մասը:

Բարեկամս միշտ փոփկանկատ՝ վայրկենաբար գո-
հացում տուաւ փափաքիս, շարունակելով:

— Մինչև հիմա յօտեցայ՝ ընկերական կեանքի,
քաղաքակրթութեան, յառաջդիմութեան, գաստիա-
րակութեան և մրցումի հետեանքով լուսագոյն զար-
գացման միջոցներու վրայ, յետոյ ցոյց տուի անոնց
անբաւականութիւնը, նկարագրեցի մագնիսականու-
թեան դերը, և այն անհուն ծառայութիւնները զորս
կուշուած է մասուցանել: Եւ սակայն քնէածութիւնն
ալ ինքնին անբաւական է գոհացում տալու մարդուն
բարձրագոյն պէտքերուն, որովհետև մինչև հիմա
գոյութիւն ունեցող կրթական ազդակները՝ «անուղ-
ղակի» միջոցներ եղած են: Օրինակ, գաստիարակու-

Թիւնը անհատի մը վրայ կը ներդրծէ անուղղակի կերպով: Մտգնիսականութեան ըսածն ալ նոյնը չէ՞: ॥

Սա տարբերութեամբ միայն որ սն փոխանակ արորին «ես»ին կոչում ընելու՝ ձեռք կառնէ բարձրագոյն գիտակցութիւնը, զոր կը վառէ զգնիւ ճշտումներով: Եւ սակայն մտգնիսականութեան մատուցած ծառայութիւններն ալ «անուղղակի» արդիւնքներ են անկարող ըլլալով՝ անհատին խառնուածքին մէջ ու է գործարանական փոփոխում մտցնելու:

Իրական կամ տեսական յառաջդիմութեան հոմարուղղակի» ազդակներ պէտք են, որոնցմով միայն կարելի պիտի ըլլայ, Արմատաքի լուծել, հրատապ խնդիրներ:

Գրեմս. — Ինչ ըսել կ'ուզեմ միջամտել ուղեղին կազմութեան՝ կատարելագործելու համար անոր կարողութիւնները:

Կը հաւատամ թէ, ժամանակ պիտի գայ, և այդ ժամանակը հեռու չէ՞ որ ուղեղին ուսումնասիրութիւնը գերագոյն հարցը պիտի ըլլայ գիտութեան ուղև Այդ պարագային՝ գործիք մը պիտի հնարէ լուսանկարելու համար ուղեղին ծալքերը իրենց բնական ձևով, գոյնով և մեծութեամբ:

Երբ այս քայլն առնուի, ահա այն ատեն՝ կարելի պիտի ըլլալ որոշել այդ ծալքերուն մէջ հիւրնկալուած մտային և բարոյական կարողութիւններու աստիճանը:

Ուղեղին և իմացականութեան փոխադարձ յարաբերութիւնները ճշտելէ վերջ՝ մարդ պիտի յաջողի ցոյց տալ իւրաքանչիւր անհատի, Ֆիզիկական, մտաւոր և բարոյական կոացութիւնը մեքենական ճշտութեամբ:

Այս մեծ քայլն առնելու համար, անհրաժեշտ է

նախ՝ այնպէս մը կատարելագործել Ռոնթկէյնի գործին, որ մէկու մը գանկին վրայ զետեղուած ին պէս, կարողանայ պատկերացնել ուղեղին նկարը:

Այն ատեն է որ մեծ յեղաշրջումներ պիտի կատարուին թէ անհատներու և թէ ընկերական կեանքի մէջ:

Այդ երջանկաբեր օրը հասածին պէս, ուսուցիչները վայրկենաբար պիտի կարողանան իրենց ուսանողներուն հոգեբանութեանը թափանցել, անոնց նկարագիրը, լատպոյն եզանակով կազմելու համար:

Երիտասարդները պիտի կարենան ճանչնալ իրենց բնածին ընդունակութիւնները և ըստ այնմ՝ ջանամ մշակել զանոնք:

Այլ ևս զեղծունիները պիտի գաղբին գոյութիւն ունենալէ, որովհետև գեղձանոցները անկարող պիտի ըլլան քողարկել իրենց ինքնութիւնը, շնորհիւ ուղեղաչափ մեքենային, այլ ևս գիւրաւ պիտի որոշուի կարող՝ անկարողէն, անկեղծը կեղծաորէն, ատաքինի մէկը՝ մով անձերէն:

Ամուսինները այլ ևս մտահոգութեան չպիտի մատնուին իրենց կիներուն անթափանցելի էութիւնը ճանչնալու համար, որովհետև պիտի կարողանան լուսանկարել իրենց կենսակիցներուն սիրոյ և բարոյականութեան տատիճանը:

Վաճառականը պիտի կարենայ մէկ փորձով սրուշել իրեն պաշտօնականներուն անձնու իրութեան չափը:

Մէկ խօսքով երջանիկ օր մը պիտի աւեաէ մարդկութեան այս պարզ գործին, ու որչափ սխալներ ուղեղումներ չի պիտի սրբադրուին մեքենական ճշգրտութեամբ: Ամուսնական սխալ ընտրութիւններն, ուղեղաչափ գործիքին շնորհիւ, պատմական առասպել-

ներ պիտի դառնան այլևս, որովհետև կարելի պիտի ըլլայ ճշդել թէ, իւրաքանչիւր անհատ իր խառնուածքին կամ մտաւորական ոյժերու, բերումով ինչ տեսակ բնաւորութեամբ ընկերուհի մը վնասուելու է...

Կանգ առաւ բարեկամս և սիկառ մը վառեց Մինչես՝ վրդովումով կը փորձէի ընդմիջել:

— Ի՞նչ, սէրն ալ պիտի չափեն սահմանափակ. . .

Այս խօսքին վրայ, սրտագին քրքիչ մը արծակեց բարեկամս ու շարունակեց. . .

Թայց այդ օրը համաշխարհային սիրոյ դարագլուխը պիտի ըլլայ, որովհետև ուղեղաչափ գործին իրական դարմանումի կերպերը ցոյց պիտի տայ, այն բոլոր ծանրակշիւ կացութիւններու մէջ որոնք մարդկութիւնը կը դրդէին պարբերաբար:

Նկատած չե՞ս արդեօք թէ Ֆիզիքական, իմացական և բարոյական արժէքի տեսակէտով ինչ անհաւասար բաշխում կատարած է բնութիւնը:

Երբ գործին՝ մեքենական ճշդութեամբ ցոյց տայ այդ անպատեհութիւնները, կամ որոշէ անհաւասարութեան աստիճանը, երբ՝ ընդունի թէ, մարդ իր ազատագրութեան երկար շրջանին մէջ, կրօնական, քաղաքական և դրամական տիրապետութեան լուծը թօթափելէն վերջ, պէտք ունի նաև պայքարելու իմացական և բնական բռնակալութիւններու դէմ, այն ատեն, որ նոր հորիզոններ պիտի բացուին մարդկային Գործունէութեան առջև:

Այս խօսքին վրայ՝ դարձեալ ընդմիջելով, իմացական բռնակալութիւն ըսիք, յորեցի, չի հասկցայ այդ բացատրութիւնը. Ի՞նչ, տրամաբանութիւնը, խելքն ալ բռնակալութիւն ի գործ կը դնեն:

Գեղամ ժպտելով՝,

— Այո՛, շարունակեց, մտային բռնութիւն. որոշ

էր ըսածս. չէ՞ մի որ, կարգ կը մարդիկ խելացի՛ մասնք միջակ կարողութեան տէր, իսկ ուրիշներ ալ մտաւորապէս տկար ծնած են: Ասիկա իմացական անհաւասար բաշխում մը չէ՞: Եւ յետոյ այդ պարագային՝ խելացիները չե՞ն որ կը տիրապետեն իրենց աւելի խոնարհ հղբայրներուն վրայ մտային գերազանցութեան շնորհիւ:

Ինչո՞ւ այս վերջիններն ալ իրենց նման խելացի չըլլային. . .

Ահա այս հարցն է որ պիտի հարկադրէ մարդը՝ ուղեղային շիճուկ մը գտնելու, որ գտնելին տակէն ներարկուելով՝ տկար կարողութիւններուն ոյժը կըրկնապատկել տայ. կամ ուղեղին ծալքերը, ընդունակ ըլնէ անսովոր գործունէութեան:

Այսպէսով է որ, կարելի պիտի ըլլայ հանճարի վերածել ամէն մարդու միտքը: Հիմա երբ դարերն են որ հանճար կը ծնին, այն հանճարներն են որ օրէ օր նոր դարագլուխներ (ՅՐԱ) պիտի բանան ու երբ ամէն ոք հանճարից իմացականութեամբ օժտուած ըլլայ, այն ատեն մարդ, բո՛ւն պայքարը՝ շրտութեան դէմ պիտի մղէ, այդ մեծ բռնակալին, որ անթափանցելի խորհուրդներով և գաղտնիքներով կը շրջապատէ մեզ:

Պիտի կորզենք զանոնք, պիտի թափանցենք իր թաղուն՝ օրէնքներուն, որովհետև մարդը աւելի բարձր է քան բնութիւնը. . . և պէտք է նրաչքներ ակնկալել իր իմացական գերազանց ուժերէն:

Վայրկեան մը, վերնայարկին վրայ՝ տաք վիճարանութիւն մը լսուեցաւ, ետիս դարձայ, մինչ Գեղամ կատարեալ ինքնափոփումով իր մտածումներուն կ'անդրադառնար: Որքան հաճելի էր լսել զինքը այդ պահուն. . .

Բարեկամս սկսաւ շարունակել. . .

— Մատնանիչ ըրած պայմաններս նեւաւոր պատա-

ներ պիտի դառնան այլևս, որովհետեւ կարելի պիտի ըլլայ ճշդել թէ, իւրաքանչիւր անհատ իր խառնուածքին կամ մտաւորական ոյժերու, բերումով ինչ տեսակ բնաւորութեամբ ընկերուհի մը վնասուելու է...

Կանգ առաւ բարեկամս և սիկառ մը վառեց Մինչեւ՝ վրդովումով կը փորձէի ընդմիջել:

— Ի՞նչ, սէրն ալ պիտի չափեն սահմանափակ... :

Այս խօսքին վրայ, սրտազին քրքիչ մը տրձակեց բարեկամս ու շարունակեց . . . :

Բայց այդ օրը համաշխարհային սիրոյ դարագլուխը պիտի ըլլայ, որովհետեւ ուղեղաչափ գործին իրական դարմանումի կերպերը ցոյց պիտի տայ, այն բոլոր ծանրակշիռ կացութիւններու մէջ որոնք մարդկութիւնը կը դըրդէին պարբերաբար:

Նկատած չե՞ս արդեօք թէ ֆիզիքական, իմացական և բարոյական արժէքի տեսակէտով՝ ինչ անհաւասար բաշխում կատարած է բնութիւնը:

Երբ գործին՝ մեքենական ճշուութեամբ ցոյց տայ այդ անպատեհութիւնները, կամ որոշէ անհաւասարութեան աստիճանը, երբ՝ ընդունի թէ, մարդ իր ազատագրութեան երկար շրջանին մէջ, կրօնական, քաղաքական և դրամական տիրապետութեան լուծը թօթափելէն վերջ, պէտք ունի նաև պայքարելու իմացական և բնական բռնակալութիւններու դէմ, այն ատեն է, որ նոր հորիզոններ պիտի բացուին մարդկային Գործունէութեան առջև:

Այս խօսքին վրայ՝ դարձեալ ընդմիջելով, իմացական բռնակալութիւն ըսիք, յորեցի, չի հասկցայ այդ բացատրութիւնը. ի՞նչ, տրամաբանութիւնը, խելքն ալ բռնակալութիւն ի գործ կը դնեն:

Գեղամ ժպտելով՝

— Այո՛, շարունակեց, մտային բռնութիւն, որոշ

էր ըսածս. չէ՞ մի որ, կարգ կը մարդիկ խելացի՝ ու մանք միջակ կարողութեան տէր, իսկ ուրիշներ ալ մտաւորապէս տկար ծնած են: Ասիկա իմացական անհաւասար բաշխում մը չէ՞: Եւ յետոյ այդ պարագային՝ խելացիները չե՞ն որ կը տիրապետեն իրենց աւելի խոնարհ եղբայրներուն վրայ մտային գերազանցութեան շնորհիւ:

Ինչո՞ւ այս վերջիններն ալ իրենց նման խելացի չըլլային . . . :

Ահա այս հարցն է որ պիտի հարկադրէ մարդը՝ ուղեղային շիճուկ մը գտնելու, որ զանկին տակէն ներարկուելով՝ տկար կարողութիւններուն ոյժը կըրկնապատկել տայ. կամ ուղեղին ծալքերը, ընդունակ ընէ անսովոր գործունէութեան:

Այսպէսով է որ, կարելի պիտի ըլլայ հանճարի վերածել ամէն մարդու միտքը: Հիմա երբ դարերն են որ հանճար կը ծնին, այն հանճարներն են որ օրէ օր նոր դարագլուխներ (ՅՄԱ) պիտի բանան ու երբ ամէն ոք հանճարեղ իմացականութեամբ օժտուած ըլլայ, այն ատեն մարդ, բո՛ւն պայքարը՝ ճիւղութեան դէմ պիտի մղէ, այդ մեծ բռնակալին, որ անթափանցելի խորհուրդներով և գաղտնիքներով կը շրջապատէ մեզ:

Պիտի կորզենք զանոնք, պիտի թափանցենք իր թալուսն օրէնքներուն, որովհետեւ մարդը աւելի բարձր է քան բնութիւնը . . . և պէտք է նրա շքեր սկսկալել իր իմացական գերազանց ուժերէն:

Վայրկեան մը, վերնայարկին վրայ տաք վիճարանութիւն մը լսուեցաւ, ետիս դարձայ, մինչ Գեղամ կատարեալ ինքնափոփումով իր մտածումներուն կ'անդրադառնար: Որքան հաճելի էր լսել զինքը այդ պահուն... :

Բարեկամս սկսաւ շարունակել . . . :

— Մտանանիչ ըրած պայմաններս նեւաւոր պատա-

հականութիւններ են, սակայն շատ մը դարեր պիտի անցնին, մինչև որ կարելի ըլլայ այդ երջանկաբեր օրը ողջունել, և սակայն յուսահատելու չէ, մագնիսականութիւնն ալ շեղում մը չէ՞ արդեօք բժշկութեան և դաստիարակութեան ներկայ պայմանադրական մէթոտներէն . . . :

Մեր ընկերքը ուրիշ բան չի կրնար ըլլալ առայժմ՝ եթէ ոչ աշխատիլ նախ ժողովրդականացնել մագնիսականութիւնը, անոր մէթոտներուն ընդհանրացումէն վերջն է որ, պարելի պիտի ըլլայ, աստիճանական յառաջացումով իրագործել նոր կատարելագործումներ:

Մեր դերը այժմ սահմանափակուած է արտաքին ախտաճանաչութեան և այդ հիման վրայ կատարուած բժշկութեան մէջ: Բայց նոյն իսկ այդ ախտաճանաչութիւնն ալ, որքա՞ն հաճելի է. քանի որ շատ անգամ, կարելի է մէկ ակնարկով թափանցել կնոջ մը կամ ու և է մարդու սրտին և մտքին ու ճանչնող անոր բարոյականը:

Գարձեալ լսեց բարեկամն ակնարկը պահ մը գէպի ծովեզերք ուզղելով:

Նուր գուգահեռարար կը հետեւէր ցամաքին, որ իր կանանչապարզ սաքածութիւններով, գեղեցիկ գօտի մը կը կազմէր ծովին երկանքը:

Հեռուն բլուրները իրարու վրայ հակած կ'երեւէին խորհրդաւոր երևոյթով, ու չինչ երկինքին մէջ հազիւ ամպի անձառս ամ ծուկներ հորիզոնին կողմը կախուած կ'սպասէին վարանումով:

Յանկարծ ցնցուեցայ, բո՛ւն փոթորիկ մը մրրկեց հոգիիս մէջ, որովհետև մեր սեղանակից գեղանի կինը եկաւ պաշտելի պշրանքով կանգնել ինձմէ՛ քանի մը քայլ անդին կանչելով նախն երկաթէ ձողերուն:

Ի՞նչպէս կրնայի այլևս հետեւիլ բարեկամիս խօսակցութեան, երբ արեւս գէպի գլուխս կը սուրար:

Գեղամ որ ճիշտ դիմացս նստած էր, դէմքը ծովին կողմը, սկսաւ ուշադրութեամբ աչքերուս մէջը նայել, յետոյ անմեղ ժպիտ մը տրձակեց ու՝

— Կ'ուզե՞ս որ կարդամ մտածումներդ յարեց. . . :

Սիրո՞վ, արտասխանեցի տեսակ մը թերահաւատութեամբ: Թէև մինչև հիմա ուշադրութեամբ կը հետեւէի խօսակցութեանս, բայց յանկարծ գեղանի կին մը ուշադրութիւնդ գրաւեց:

Ան քանի մը քայլ հեռուն կանգնած կը դիտէ մեզ:

Դուն կնոջմէն, իսկ կինն ա՛լ մագնիսականութենէ հրապուրուած կը թուի, բայց ան՝ գուշակութիւններէս շփոթած թէ կը փափաքի մեր խօսակցութեան մասնակցիլ և թէ չի համարձակիր մօտենալ, պարզապէս վարանումի մասնուած է. . . :

Բարբոզին ապշած՝ բարեկամիս յայտարարութիւնէն չէի կրնար ըմբռնել թէ, ի՞նչպէս յաջողած էր ո՛չ միայն զգալ իր ետին կանգնող կնոջ ներկայութիւնը, այլ նաև թափանցել անոր մտածումներուն, հետևաբար ինզրեցի իր գուշակութեան մեթոտը սորվեցնել ինձի . . . :

Սիկսս մ'ես վստեց բարեկամս, ու ակնարկն աւրիքներուն կողմն ուղղելէ վերջ՝ ինձի դարձաւ յարելով:

— Դիտելու կարողութիւնը մեծ գեր կը կատարէ մագնիսականութեան մէջ: Հեղինակ մը միայն կը ճանչնամ, որ գիտութեան վերածած է զայն իր վէպերուն մէջ:

Ո՞վ չէ կարդացած Քնոն Տոյի վէպերը, ուր՝ դիտելու կարողութեան մեծագործութիւններն են որ կը փառարանուին:

Ո՛րքան հետաքրքրաշարժ են անոնք:

Շերլոք Հոլմսի հեղինակը, իր այս գիտութեամբ՝ հետամուտ եղած է ոճրագործները դուրս հանել իրենց թաքստոցներէն, ինչ որ տարբեր և ոչ մէկ միջոցաւ, կարելի պիտի ըլլար իրագործել:

Նկատելի է որ, Քոնոն Տոյլ Փիզիգակոն երևոյթներ միայն նկատի առած ըլլալով, չէ կրցած ամբողջովին պարզել դիտելու կարողութեան դերը իր զանազան փուլերուն մէջ: Ինչպէս որ Քրոֆ. Քուէքնայոս մագնիսականութիւնը մտաւոր և բարոյական կուտանի վրայ փոխադրեց այնպէս ալ՝ անհրաժեշտ էր գիտել ու կարողութիւնը օժտել Ֆիզիքական պայմաններէ վեր՝ մտաւոր և բարոյական գործունէութեամբ ևս:

Կուզես գիտնալ թէ, ինչպէս քիչ մը առաջ՝ առանց կասկածելու կրնո՞յ ներկայութեանը վրայ, կրցի անոր մտածումները քեզի հաղորդել:

Ասկէ պարզ բան չիկայ: Երբ ուսումնասիրութիւններու ամփոփ նկարագրութիւնը կրնէի քեզ՝ յանկարծ դիտեցի որ ուշագրութիւնդ դիմացի կողմը կեդրոնացուցիր խանդավառ յափշտակուած երևոյթով մը:

Նոյն վայրկենին անուշ բուրում մը սկսաւ ծաւալիլ հովին ուղղութեամբ: Որովհետեւ քամին կունակէս կը փչէր, և հետը կը բերէր այդ ասորժաբոյր անուշահոտութիւնը՝ դիւրին էր հետեցնել որ հոս մէկը կանգնած ըլլալու էր մեզնէ քանի մը քայլ հեռուն: Որովհետեւ բուրմունքը տեղահանապէս զգալի կըլար, և դիւրաւ կը մատնէր իր կանացի ճաշակը՝ կրցի գուշակել թէ ուշագրութիւնդ գրաւող անձը շահեկան կիներ ըլլալու էր:

Քանի որ այդ կինը երկար ատեն, միևնոյն դիրքի մէջ սպասեց, կը նշանակէր թէ նպատակ մը կար իր սպասումին մէջ:

Դիմացի տեսարաննե՞րը կը դիտէր:

Հաւանականաբար ո՛չ: Որովհետեւ այդքան ճաշակաւոր մէկը հաճոյք չի պիտի զգար դիմացի միօրինակ ցամաքէն:

Կը կարդա՞ր. — այդ ալ հաւանական էր, իր խառնուածքէն գոտելով. քանի որ արդէն, սեղանին վրայ կրցած էի ուսումնասիրել իր անհամբերութիւնը: Ուրեմն մեր խօսակցութեան կը հետեւէր: Այո՛, այս վերջին ենթադրութիւնը խիստ հաւանական էր նկատելով թէ, մագնիսականութեան նման գիտութիւն մը, ինչքան հետաքրքրութիւն կարթնցնէ, մանաւանդ կիներու շրջանակին մէջ: Այսպէս, այդ կինը՝ կը հետաքրքրուէր մեր խօսակցութեամբ, բայց անձնօթ մը ըլլալով չէր համարձակեր մօտենալ, հիմա՝ հասկնալէ վերջ թէ իր մտածումները ծանօթ են այլևս մեզի, կասկած չունիմ որ նախ զարմացաւ, յետոյ վրդովեցաւ և վերջն ալ տեղի տուաւ հետաքրքրութեան...:

Բարեկամիս ըսածները որքան անհաւատալի՝ այնքան ալ արամորանական կը թուէին:

Ինչ լաւ մշակած էր, կը խորհէի իր դիտելու կարողութիւնը:

Յանկարծ մեղմ ոտնաձայներ լսուեցան և ուշագրութիւնս հազիւ այն կողմը դարձուցի. երբ՝ օտարական կինը կանգ առաւ մեր առջին շիկնոտ դէմքով:

— Ա՛խ, կը մտածէի սերքնապէս. վերջապէս պիտի կրնայի վրէժս լուծել իրմէ, երբ ան կ'սկսէր:

— Ներե՛ցէք պարոններ, եթէ երբէք արգելք կը ըլլամ ձեր խօսակցութեան: Կը հաճիք արդեօք արտօնել որ երկու հարցում ուղղեմ ձեզ:

Բարեկամս որ ոտքի ելած էր արդէն, աթոս մը հրամցնելով՝

— Սիրո՛վ, պատասխանեց փափկանկատութեամբ:

— Շնորհակալ եմ աւելցուց կի՛նը կասկածով և խանդաղատանքով. ու պահ մը մտածելէ վերջ:

Կրնա՞ք հարցուց զուշակել քնուծիւնս:

Բարեկամս աշխուժիւ.

— Ո՛չ միայն կրնամ պարզել ձեր նկարագիրը, այլ եթէ փախաքի՛ք՝ կարելի է նոյնիսկ ձեր ծնողքին բնաւորութիւնն ալ պատմել, հակառակ անոր որ առաջին անգամ կը առնան ձեզ:

— Շնորհապարտ պիտի մնամ ձեր գուշակութիւն ներս իմանալով, կը փութար աւելցնել պչրուհին՝ որուն բերնին մէջ, բուսերն աչքքան նուրբ արտասանութեամբ մը կը գարնուին որ ամբողջ հոգւովս կը սարսուտի:

Տակաւին չէի կրնար հաւատալ աչքիս առջև պարզուող այս թանկագին տեսարանին:

Ո՞վ պիտի կրնար երեւակայել թէ, այդքան խրոխտ գեղեցիկ կի՛ն մը ինքնաբերաբար զիջանէր մեր հետ տեսակցութեան . . . :

Ի՞նչ հրաշք էր որ տեղի կ'ունենար ի՞նչ շարժառիթներէ զրուած՝ կուգար ան. իր ցաւատանչ հոգիին ծալքերը մեզի պատմել:

Կը մտածէի թէ շահեկան յայտնութիւններ կային լսելիք. բայց ամէն բան բարեկամիս նրբամտութեանէն կախում պիտի ունենար անշուշտ. Գեղամ խօսքը պչրուհիին ուղղելով՝ — Ձեր հայրը, յարեց, բարի ազնիւ և սակայն՝ անհատակամտութենէ զուրկ անձ մ'էր, թէ զգացումէ առաջնորդուող և թէ՛ շուտով համոզուելու արտադիրք իսկ ձեր մայրը՝ գեղեցիկ, հրապուրիչ, բայց անձնասէր և քմահաճ կի՛ն մ'էր, միշտ պատրաստ օրիշները քննադատելու սուանց երբէք հանդուրժելու իր մասին ո և է դիտողութեան . . . :

Այնքան նրբազատ և իր իրաւունքը պաշտպանե-

լու կողմէ կարող էր որ, անզգալարար տեւականորէն գերի ըրած էր ամուսինը՝ իր քմահաճոյքներուն: Ձեր փառասէր մայրը կատարեալ սիրահար մ'էր նաև գեղեցիկի, բայց իր խորամանկութեանը պատճառով՝ ոչ ոք յաջողած էր որսալ զայն. . . : Հակառակ անհամար հետապնդումներու:

Ձեր մօրը հրապոյրներուն պատճառով, քանի՛ քանի՛ անձեր դժբաղդ եղած չին, որոնց տուայտանքներուն պատմութիւնը շատ թարմ ըլլալու է տակաւին իր յիշողութեանը մէջ, Դուք՝ ձեր ծնողքին հակասական մէկ խառնուրդը կը ներկայացնէք: Ժառանգած էք թէ աւաքիտութիւն և թէ համապատասխանող մութիւններ:

Օրինակ, հօր կողմէ՝ միամտութիւն. իսկ մօր կողմէ ալ խորամանկութիւն ընդունած էք:

Վայրկեաններ կան՝ ուր անձնասէր կը թուիք, մինչ ուրիշ պարագաներու տակ, այլասէր և միամիտ. . . : Հաւանական է միայն որ, մայրական հակամիտութիւնները ձեր մէջ գերակշիռ ըլլան: Դուք ալ փառասէր, պչրամուլ և գեղեցիկ սիրահար էիք:

Երբ մեծացաք մայրերնիդ էր որ ձեռք առաւ ձեր կրթութեան գործը, և առաջնորդեց իր ըմբռնած սալօնի կեանքին: Ձքնաղ օրիորդ մը դարձած էիք, ու ձեր մայրը հպարտ կ'զգար պչրանքնիդ դիտելով, բայց խեղճ կի՛նը հաշուի չէր առած անշուշտ Սալօնի կեանքի փորձութիւնները՝ որոնք փառասէր օրիորդի մը մէն մի քայլափոխին կ'ընկերանան:

Օրին մէկը, խորամանկ երիտասարդ մը, ձեր թարմ հրապոյրները վայելելէ և շահագործելէ վերջ՝ յուսախափ ըրաւ ձեզ իր լքուժով . . . :

Ձեզի՛ որ կատարելապէս հաւատացած էին անոր անկեղծութեան. և զո՛ւք որ երջանկութեան փիթթումը

կ'ակնկալէիք իր սիրոյ հաստիքներէն, այո՛, դուք լախտի հարուած մը ընդունեցիք երբ ցուրտ իրականութիւնը եկաւ հմայաթափ ընել ձեզ:

Այդ վայրկեանին, ստկայի յուսախարութիւն մը տիրեց ձեր վրայ, ու դո՛ւք հպարտ աղջիկ, որոշեցիք վրէժը լուծել ձեր ստեղծութեան, զժոխային մտածում մը սնուցանելով . . . :

Ահա ե՛ր ի՞նչ էր այդ մտածումը, և բաւական օրեր անցան, մինչև որ վերջնականապէս կ'մտադրէիք, ձեր թարմ տարիքին հրապուրներովը զինուած՝ գերի ընել պատահաբար հանդիպող ու և է երիտասարդ, անոր տուայտանքներուն մէջ ձեր երբեմնի յուսախարութեան փոխարինութիւնը նշմարել կարծելով:

Այս սանձարձակ կեանքը ստկայն բեռ մը եղած է ձեզ համար. և այժմէն ամէն բանէ կ'սկսիք ծանձրանալ. ու ոչինչ կարող է այլ ևս հաճոյք պատճառել ձեզ. քանի որ մտալուտ զղային սնանկութիւն մը կը սպառնայ ձեր երջանկութեան:

Պէտք է որ ճիշտ ժամանակին խուսափիք վերահաս վտանգէն:

Գեղամ թաշկինակովը ճակատը սրբեց ու լուռ մնաց յետոյ օտարական կնոջ դառնալով:

— Կրցի՛ արդեօք ճշգիւ պատկերացնել ձեր կենսագրութիւնը, հարցուց: Պջրուհին շուարած էր հակառակ իր խրոխտ երևոյթին:

Թերևս այնպէս կերևակայէր թէ գուշակի կամ մարգարէի մը գէմն էր որ կը գտնուէր, ինչ որ ալ ըլլար անօգուտ էր կեղծել, այնպէս որ թէև բաւական վարանումով, բայց բարեկամիս անկեղծ և անվերապահ ընթացքէն զգածուած՝ խոտտովանեցու անոր գուշակութիւններուն ճշտութիւնը. մինչ ես՝ ապուշութիւնէս գլուխս կը շարժի . . . :

Ի՞նչպէս բարեկամս կրնար յաջողիլ անձանօթ ան ձերու կենսագրութեան թափանցել, ահա՛, շահեկան հարցը:

Գեղամ խօսակցութիւնը շարունակելով՝

— Յայտարարութիւններս ըսաւ թերևս յուսախար ըրին զիս, բայց մի՛ վախնաք, որովհետև է՛ն դիւրին գործն է կանոնաւորել ձեր ջղային դրութիւնը, զժբաղդ կեանքերնիդ երջանիկ ընելով:

Մագնիսական մէկ փորձ՝ բաւական է յեղաշրջելու ձեր մտածումներուն հոսանքը: Ըսածս՝ այնքան որոշ է որ, եթէ երբէք տարակուսիք՝ պատրաստ եմ խօսքերս զործնականապէս հաստատելու:

Օտարական կնոջ աչքերը անբացատրելիօրէն զըրանիչ արտայայտութիւն մը աւին յանկարծ . . . :

Հիանալի էր ան՝ այդ դիրքին մէջ, հրեշտակային բան մը ունէր որ կը գիտէր, կը հրապուրէր զիս . . . :

Ա՛խ, այդ պջրուհին բարեկամիս ձեռքին մէջ մեղրամոմ մը պիտի կրնար ըլլալ բայց այն, մեծ միտալ մը կը գործէր . . . իր մարդասիրական դրդումն բուն անսալով:

Յանկարծ Գեղամ ոտքի ելաւ ու սրահ իջաւ, տրու վրայ օտարուհին, կարծես ինձմէ խորշելով՝ ինքնաբերաբար անոր հետեւեցաւ տենդոտ քայլերով: Մինչ ես՝ բռունցքս սեղմած.

— Կեցի՛ր դուն . . . կը մուտայի ակունքերուս մէջէն . . . :

ՎԼՈՒՆ Ե.

ԳԵՂԱՆԻ ՊԶՐՈՒՇԻՆ ԿԸ ՄԱԳՆԻՍԱՆԱՅ

ՄԻՏՔ ԹԷ ԶԳԱՅՈՒՄ

Երբ բարեկամս, երկու վայրկենէն վեր փութաց՝ առանձին էր, ա՛յդ պահուն վերնայարկին վրայ, մեզ մէջ զատ ոչ ոք կը գտնուէր. այնպէս որ ազատ շունչ մը աննելով՝ բարեկամս աթոռին մէջ ընկողմանածին պէս, հարցուցի թէ ինչպէ՞ս այդքան տարօրինակ յայտնութիւններ ըրած էր, առանց նախապէս ճանչցած ըլլալու այդ կիներն ու ընտանիքը:

Բարեկամս, ժպտագին՝ պոտապոտանցեց.

— Գաղտնիքը լաւ դիտել և ուղիղ ենթադրութիւններ կատարելուն մէջ կը կայանայ, եղանակը այնքան պարզ է որ, ամէն մարդ կրնայ օգտուիլ:

Առաջին անգամ, սեզանին վրայ երբ տեսայ այդ պշրուհին էն առաջ ուշադրութիւնս գրաւեց իր աչքերուն արասայտութիւնը:

Անոր խորհրդաւոր ակնարկը, տարօրինակ և շահեկան բնաւորութիւնը կը յատկանշէր: Խառնուրդ մը պիտի ըսէի՝ թէ հօրը և մօրը բնաւորութենէն ձուլուած: Ուրեմն սովորական թիփ մը չէր:

Գարձեալ, սեղանին վրայ կրցի նշմարել որ, մեզի կը դիտէր այնքան աննշմարելի կերպով զորս դժուար պիտի ըլլար ճշդել, հետեաբար խրոխտ, նրբամիտ, հետաքրքիր և դիտող մէկն էր. . . :

Որովհետև խիստ ճաշակաւոր արդուզարդ մը կը ցուցադրէր, և նուրբ գեղեցիկ գոհարեղէններով պճնուած էր. ասկէ զատ իր ուշագրաւ (distingué) ձևերը և ուրիշ կարգ մը երկրորդական պարագաներ, ենթադրել կուտային թէ ազնուական ընտանիքի մը զաւակն էր:

Թէև սղաժանդազարդ ծանրագին մատանիներ կը կրէր, և սակայն ամուսնական խորհրդանշանը (alliance) չէր երևեր անոնց մէջ, ուրեմն տակաւին ամուսնացած չէր:

Նոյն պահուն, երեք մտածումներ կը ներկայանային մտքիս:

Ա. — Ի՞նչ բնաւորութիւն ունէր ծնողքը:

Բ. — Ի՞նչու չէր ամուսնացած ինք:

Գ. — Ի՞նչ շարժառիթներ մղած էին այս պշրուհին միայնակ մինչև Աև Մով ճամբորդելու:

Ըսի թէ, օրիորդը նուրբ դիտող, գեղեցկագիտական ճաշակով օժտուած, փառասէր և անձնասէր մէկն էր:

ԶԷ՛ մի որ ընդհանրապէս դիտող կ'ըլլան այն կիներն որոնք սնծանութի մը հանդիպածին պէս՝ կը ջանան իրենց աչքին ծայրովը վերլուծել զայն, կատարելապէս անտարբերութիւն ձևացնելով:

Հո՛տ է արդէն իրենց տկարութիւնն ու յաջողութիւնը. . . :

Կիներու մէջ, դիտելու կարողութիւնը մէկ մտածում միայն կը թելադրէ ընդհանրապէս. — ճանչնա դիւմայինը, որպէս զի եթէ դիւրաւ ազգուող մէկն ըլլայ՝ արհամարհել զայն իրենց պշրանքով, իսկ եթէ համակրելի է՝ հիանալ վրան. հիացում մը, որ մինչև սխրարահարութեան կրնայ յառաջանալ. . . :

Ահա, ար՛ր համար է որ քեզի հանդէպ որքան

անտարբերութիւն՝ նոյնքան ալ իմ մասին շահագրգռութիւն ցոյց տուաւ:

Արդ, այն կիներ որ այս կերպ կը վարուի՝ կը նշանակէ թէ, ինք անձնասէր, խորխտ և շահեկան էակ մ'է, հետեւաբար պէտք է իր առջին միշտ բարձր պահել արժանապատուութիւնը, որպէս զի հարկադրեալ զայն ինքնաբերաբար արտայայտելու իր համակրութիւնը . . . :

Հիմա, մեր գիտողութիւնները շարունակելով՝ ըսինք նաև թէ, իր արդուզարդը, անքննագատեկի պարզութիւն, ճաշակ, և միանգամայն շքեղութիւն կը մատնէ, ինչ որ զիւրին է նաև հաստատել իր վարսայարդարուէն (coiffure) զգեստին ներդաշնակ գոյներէն և իր վայելչութենէն:

Աչքերուն բիւրեղափայլ ցոլեր, ուղղակի գեղեցկազօտական հակումներ կը թելադրէ, յակ խորխտ քալուածքը ընական և ազնուապետակա՛ն հպարտութիւն մը, որ հիանալի կերպով կը պատշաճի իրեն:

Այս կնոջ մէջ ազնիւ զգացումներ ալ գոյութիւն ունին և հակառակ իր դիտելու սուր կարողութեան և հետաքրքրութեան, որոնք կասկածոտութիւն կ'ենթադրեն, ինք միամիտ և բարի է միանգամայն, քանի որ ուրիշ որ և է սթարագալի տակ, երբէք չպիտի զիջանէր հետեւի և մասնակցիլ մեր խօսակցութեան:

Հիմա՛, երբ կ'ըսենք թէ բարի և անձնասէր, խորամանկ բայց միամիտ ձանձրացող սակայն անձանձիր էակ մ'է՛, ատիկա տարօրինակ երկուորականութիւն (dualisme) մը կը մատնէ, այսինքն շտեմական խառնուրդ մը, հետեւաբար որոշ ընաւորութենէ մը աւելի՛ ծնողքին ձգտումներուն խտացումը կը թելադրէ:

Կը մնայ միայն ճշտել թէ, հորմէն կամ մօրմէն

ինչ յատկութիւններ ժառանգած է:

Ընդհանրապէս գեղեցիկի ճաշակը, գիտողութիւնը և անձնասիրութեան զգացումը մայրերէն կը փոխանցուի իրենց զաւակներուն, հետեւաբար այդ յատկանիշներուն վրայ հիմնուելով, կարելի է ըսել թէ այս պշրուհիին մայրը՝ գիտող, խորխտ, հետաքրքիր, ճաշակաւոր, խորամանկ, անձնասէր և ազդեցիկ կին մ'է:

Որովհետև մեր ճանչցած օտարական կնոջ վրայ միամտութիւն ալ գիտած էինք, և յետոյ նկատելով որ գրեթէ ընդհանրապէս վերոյիշեալ յատկութիւններով օժտուած կիները իրենց ներգործական ընութեան բերումով՝ կրաւորական խառնուածքի տէր մարդերու հետ կ'ամուսնանան. գոգոցես ճակատագրական թաղուն վճիռի մը նազանդելով՝ հետեւաբար ինքնին կը հետեւի թէ մեր պշրուհիին հայրն ալ բարի, ազնիւ, և միամիտ մարդ մ'էր:

Մէկը այն դիրքերէն որոնք տկար ջիղեր միայն կ'ունենան, և վայրկենաբար կը սիրահարին պշրասէր, հրապուրիչ և քրահած կիներու վերջի վերջոյ գերի ըլլալով՝ անունց հրապուրիչ յուծին . . . :

Հոգեբանական այս վերլուծումը կատարելէ վերջ կը մնայ գուշակել թէ ինչո՞ւ չէր ամուսնացած ան՝ հակառակ իր հարստութեան, իր գեղեցկութեան և իր թարմ տարիքին հրապոյրներուն, կամ ի՞նչ գաղտնիք կար որ մէկուսայնէր զայն ընտանեկան կեանքէ . . . :

Բնական է անշուշտ ընդունիլ թէ անոր մայրը իր ազդեցութեան բերումով՝ ձեռք առած պիտի ըլլար այս գեղանի օրիորդին կրթութիւնը, Սալօնէ պահանջուած կենցաղագիտութեամբ օժտելու համար զայն:

Իր ազջիկը գեղեցիկ էր և distinguée կնոջ մը ամ.

բողջ պշրանքը կրնար հիանալիօրէն ցուցադրել, այնպէս որ սալօնէ ներս իր մուտքը՝ հաւանականաբար կատարեալ յաջողութիւն մը եղած է:

Այդ կեանքը սանձարձակ ասպարէզ մը կը բանար իր առջին, չէ՛ մի որ միւս կողմէ, մայրն ալ ներուղամտութեամբ պիտի քաջալերէր իր ամէն մէկ պահանջումը՝ և պայմանադրական սովորութիւններէ դուրս՝ կատարուած ու է շեղում . . . :

Եւ սակայն Սալօնն ալ, իր փորձութիւններն ալ ունէր . . . այն օրէն ուր, ապագայ պշրուհին կը գիտակցէր իր գեղեցկութեան և ուշադրութիւն գրաւելու փորձերը կը կատարելագործէր՝ ճիշդ այդ պահուն, խորամանկ այցելուներ՝ իրենք ալ բարձր ընտանիքի զաւակ, չէին ուշացած որս մը նշմարել . . . :

Այո՛, շահեկան և գեղեցիկ որս մը: Բնականաբար անոնք լարեցին իրի՛ց ցանցերը, իւրօքանչիւրը իր ըմբռնած ձևով: Շատ: Կարտուեցան և սակայն անխուսափելիօրէն գտնուեցաւ մէկն ալ, որ կրցաւ իր ցանցին մէջ կարթել, այս խորխտ անմերձանալի օրիորդը . . . :

Ամիս մը, կո՛մ թերևս աւելի տևեց, սիրով արբշիռ՝ տեսակցութիւններու այս շրջանը:

Երիտասարդ, նիւթապաշտ և գործնականամիտ տըղայ՝ լքեց այս չքնաղ օրիորդը, այն վայրկենին ուր ան սիրոյ գերագոյն գրաւականը ամուսնութիւն կազմակալէր իր բարեկամէն . . . :

Այս լքումը, այս անկումը, որուն ետին տարող անցեալ մը կը պատկերանայ, և որ հիմա այդ լքումին պատճառով՝ սև արատ մը պիտի բերէր իր պատիւին, սարսափ կ'ազդէր գծրաղդ աղջկան:

Ինք սիրոյ զո՛հ մը, ինք խաբուած մը . . . :
Կատաղութենէնն կուլար սէգ պշրուհին, բայց լա-

ցի և յուզումին մէջ, խեղդուած տագնապներ վայրագ մտածում մը արթնցուցին իր մէջ:

Վրէ՛էի գաղտփարը՝ սուանց որու միշտ աղարտուած մէկը պիտի նկատէր ինքզինքը . . . :

Իր այս խօսքը արշաւանքին մէջ ջղային ինչ փոթորիկներու ենթարկուած չէր, կամ հոգեկան ինչ տագնապներ պաշարած չէն զինքը:

Իր աննայտակ դեղերումներէն խելայե՛: Բսինք թէ ինքզինքը նետած էր ճամբորդութեան՝ գիրկը տեսարաններու փոփոխութեամբ մոռնալու համար տխուր անցեալը:

Այո՛, մոռացումը զոր բանաստեղծական արևելքի պայծառ երկինքը միայն պիտի կրնար պարզակել:

Ասկէ դատ, ճամբորդութեան ուրիշ ինչ շարժառիթ կարելի է ենթադրել:

Պէտք չէ մոռնալ սակայն, թէ այս կինը բացարձակապէս կ'ատէ էրիկ մարդիկը, միտքը դրած ըլլալով, անգթօրէն շարչարել զանոնք, գիտես, քեզի ալ փառաս որ խաղ մը պիտի խաղար՝ եթէ ժամանակին չի միջամտէի . . . :

Կտակարմիր կտրած էի և գլուխս խոնարեցուցած, աչքերս վար՝, ալիքներուն վրայ կեդրոնացուցի:

Նաւը վառայի հրուանդանին ուղղութեամբ ծովին բացէն կանցնէր:

Դիմացի ծովեզերքը միշտ խորհրդաւոր կանանչութեամբ քողարկուած կը մնար:

Ընդհանուր լուծեան մէջէն՝ հազիւ հեռուէն լսելի կըլլար, մեքենաներուն հեւքոտ հնդիւնը:

Մեր բարեկամուհին, նոյն վայրկենին, դարձեալ վերնալայրկը կը փութար, քայլերը մեր կողմն ուղղելով:

Դասը լաւ սովորած տղու մը նման՝ զինքը տեսա-

ծիս պէս, բարեկամիս խորհուրդները յիշելով՝ խրոխտ
և արհամարհոտ ընթացք մը ցոյց տուի, որ վայրկեանա-
բար ուշադրութիւնը գրաւեց, բայց ան՝ խրոխտօրէն
բարեկամիս դառնալով՝

— Սկսի՛նք, ըսաւ մագնիսական փորձին . . .

Գերբացօյն ճիգով մը հետզհետէ կը շեշտէի ան-
տարբերութիւնս, այնպէս որ երբ բարեկամս թաքի
կ'ելլէր՝ ես նստած տեղս գամուած կը մնայի, տար-
օրինակ վերապահութեամբ . . . :

Հիմա՛, կինը կ'սկսէր մտահոյ երևոյթ մը առնել և
զիս մտանախոյ ընելով, կը խնդրէր որ ես ալ ներկա
գտնուէի այդ շահնկան փորձին:

Օ՛ն, օ՛ն կը մտածէի, գաղտագողի ուրախու-
թեամբ՝ կ'սկսինք առաջին յաղթանակը ստանել կանացի
դիւանագիտութեան վրայ . . . :

Բարեկամս ժպտելով աչք ըրաւ, որ իրենց հետե-
ւիմ:

Դարձեալ մերժեցի և կնոջ ստիպումներուն վրայ
հազիւ զիջանելով, ակամայ նազանդեցայ, տաժանու-
լի պարտականութիւն մը կատարելու գծկամակ ար-
տայայտութեամբ:

Յո՛յց մ'էր ըրածս սակայն, որովհետեւ թէ՛ կինը և
թէ՛ մագնիսական փորձը հաւասարապէս կը շահա-
գրգռէին զիս:

Խցիկ առանձնագանք միասին, մինչ երրորդ նաւ
պետը, շիկահեր, կրակոտ երիտասարդ մը, մեզ տե-
սածին պէս, կատաղութիւնէն բառեր մը կը մումաբ
բռունցքը սեղմած:

Ո՛վ գիտէ թերեւս, ան ալ զո՞ն մ'էր մեր բարեկա-
մունիին հրապոյրներէն գրաւուած . . . :

Խցիկին մէջ, անուշ բուրում մը կը ծաւալէր:
Հայելին առջև՝ արդուզարդի առարկաներ ցի-

րուցան երևոյթ մ'առած էին, անկիւն մը նստած՝ կը
դիտէի բարեկամիս շարժումներն և գեղանի կինը՝
զորս հարելի պիտի ըլլար բազմաթիւ վատօղի և կրու-
կի հետ . . . :

Սպասելու ժամանակ չի կար, Գեղամ թաքի կանգ-
նելով՝ երկուս յալ առաւ դէպի պչրուհին, ընկողմա-
նած զիրք մը որոշեց անոր և աջ ձեռքն տփին մէջ
տանելով նայուածքը վրան յառեց, ու պատուիրեց
որ ինքնամոխոխուի:

Փորձը սկսած էր և ես ուշադրութեամբ կը դիտէի
զայն, հիմա Գեղամի նայուածքը հետզհետէ աւելի
կեղբոնացած, աւելի ուժեղ արտայայտութիւն մը
կ'առնէր:

Կարծես կնք արտականութիւն մը կը շողար բիրե-
րուն մէջէն և այդ անթարթ սեւուումը, տարօրինակ
ձգողութեամբը հետզհետէ զգալի կ'ընէր իր հմայքը:

Աստիճանաբար անձանօթ կնոջ դէմքին վրայ, փո-
խումներ տեղի կ'ունենային . . . :

Նա՛խ, որովհետեւ վերուպահութեամբ միտքն համա-
կերպուած էր տրուած պատուէրներուն, կ'սկսէր ժայ-
տիլ և սկիւարկը հոս ու հոն պտտցնել, բայց երբ իր
վրայ ծանրացող ձգողութիւնը հետզհետէ կ'սկսէր ա-
ւելի ներգործել, այդ պատճառով հինգ վայրկեան շահ-
ցած, յոգնութեան արտայայտութիւն մը կ'նկարուէր
այդ պաշտօնի դէմքին վրայ, թարթիչները կ'սկսէին
ջրածիւօրէն շարժիլ . . . :

Յանկարծ անոր աչքերը ողողուեցան, և արցուն-
քի առաջին շիթը, մեղմօրէն բիւրեղացաւ իր վարդ
այտերուն վրայ . . . :

Ո՛հ, այդ վայրկեանին զմայելի էր ան երկնային
մեղամաղձոտութիւն մը կը նշմարուէր իր պաշտելի
դիմագիծերուն վրայ:

Ո՞ր նկարիչը պիտի կրնար երևակայել այդքան հի-
անալի և բանաստեղծական դիրք մը . . . :

Գեղանի օրիորդը, հեռահեռ է նոր երեւոյթներ կը
պարզէր, հիմա, աննպատակ կամ պիտակցութիւնէ
զուրկ ակնարկը՝ գրաւիչ տխրութիւն մը կուտար
դէմքին . . . :

Յանկարծ, հառաչեց և ինքնաբերաբար մեղմօրէն
վարագուրեց երկինք ցոլացնող աննման աչքերը,
թարթիչներուն տակ և մագնիսացաւ . . . :

Յուզուած էի այդ վայրկեանին, Ֆիզիքական մար-
դը, լռած էր իմ մէջ, եւ այդ տեսարանին դիւթա-
կան ազդեցութեան տակ՝ իմ ալ երևակայութիւնս ան-
սահման ոլորաներ կը թեւածէր . . . :

— Ի՞նչ գաղտնիք էր աս, կը մտածէի գլուխս ցն-
ցելով:

Բարեկամս որ բողբոսկան քարոզիչի մը նման՝
ներշնչուած կը թուէր, նախ խորհրդաւոր կերպով
ինծի նայեցաւ, յետոյ մագնիսացած կնոջ գառնալով՝
մեղմ բայց հասու շեշտով սկսաւ հետեւեալ թելադրու-
թեան:

«Մագնիսական ջուներ քեզի է՛ն առաքինի մտա-
ծումներով օժտած է հիմա:

Ազնիւ զգացումներդ սկսած են արթննալ, այնպէս
որ, այլ ևս ուշադրութիւնդ պիտի կեդրոնացնես միմի-
այն պարկետութեան, բարութեան և պատուաւոր
կեանքի վրայ:

Այսուհետեւ պիտի ըմբռնես կեանքի նպատակը, և
պիտի զանազանես իրական և կնոյժ հաճոյքները . . . :

Դատողութիւնն է որ պիտի առաջնորդէ քեզ և
երբէք չի պիտի շեղիս անոր գծած ճամբէն . . .

Բարձր «Յա»դ՝ հիմա՛, այնպէս մը դրոշմուած է
այս թելադրութիւններով՝ որ երբէք չպիտի կրնաս շե-

ղիլ առաքինութեան շաւիղէն:

Ասկէ վերջը, օժտուած պիտի ըլլաս բարի և ան-
կեղծ անձերը ճանչնալու ընդունակութեամբ և անոնց
այնքան համակրանք պիտի ներշնչես, որ ամէն կողմէ,
յարգանքի արժանանաս . . . :

Քիչ ատենէն՝ պիտի յաջողիս ամուսնանալ՝ ճաշա-
կիդ և լաւագոյն զգացումներուդ համապատասխա-
նող բարի մէկուն հետ, անոր վրայ կեդրոնացնելով
ամբողջ սէրդ ու գուրգուրանքդ . . . : Ու երբ՝ ըն-
տանեկան պարտականութիւններ ծանրանան վրադ,
սիրով յանձն պիտի տանես զանոնք, նպատակ ընտրե-
լով թէ՛ ամուսինդ երջանիկ ընելու և թէ՛ զաւակնե-
րուդ կրթութեան մեծ գործը . . . :

Տէ՛րը յաջողութեամբ պիտի պսակէ այս բարո-
յական վերազարթնումդ ու երբ արթննաս՝ վայրկե-
նաբար պիտի ըմբռնես բարձր «Ես»ին քեզի ընծա-
յած հոգեկան ուրախութիւնը . . . :

Բարեկամս երեք անգամ կրկնեց այս թելադրու-
թիւնները, յետոյ տասը վայրկեանէն արթննալ պատուի-
րեց ազդու ձայնով:

Սպասումի երկայն պահ մը անցուցի անձկագին:

Որոշեալ ատենին, գեղանի օրիորդը, յանկարծ
բացաւ իր երկնային աննման աչքերը, որոնց մէջ
տխուր ժպիտ մը կը նուազէր, ու ինքզինքը ամփոփե-
լով՝ բարեկամիս դարձաւ ու՝

— Պարո՞ն ըսաւ, կեանքիս մինչև վերջը ձեզի
երախտապարտ պիտի մնամ, որովհետեւ անկարելի է
մոռնալ ձեր բարեսացակամութիւնը:

Դուք՝ կեանքս փրկեցիք . . . :

Փորձը վերջացած էր ու հրաժեշտ կ'տանէինք գե-
ղանի բարեկամուհիէն:

Միտքս հաճելի յիշատակներով այնքան պաշար-

ուսած էր որ, խցիկ առանձնացածիս պէս՝ անուշ քուն
մը վայրկենաբար զիս բանաստեղծական երազներու
աշխարհը փոխադրեց . . . :

Չեմ գիտեր թէ քանի ժամ քնացած էի, երբ աչ-
քերս բացի՝ լոյսը կը ճեղքուէր արգէս, նաւը շա-
տոնց Սամսոնի առջև խարսխած էր, բայց քաղաքը
ճուռչին մէջէն դեռ նոր կ'արթննար:

Հապճեպով վերնայարկ փութացի, չեմ գիտեր
ինչո՞ւ ժամանակը այնքան արագ կը սահէր:

Մեկնելու վայրկեանը կը մտննար և ակնդէտ
կ'սպասէի գեղանի պշտուհիին որ տակաւին չէր ե-
րևեր . . . :

Վերջապէս եկաւ ան. բաց կապոյտ շրջագգեստ
հագած, հիանալի ժպիտով մը մեզ ողջունելով:

Այդ վայրկենին, խորհրդաւոր բան մը կար անոր
նուաղուն աչքերուն մէջ որ բաւերով չի բացատրե-
ուիր . . . :

Ա՛խ, Աստուած, կը մտածէի, ի՞նչպէս կարելի
պիտի ըլլար առ յաւէտ բաժնուիլ այս հրեշտակէն . . . :

Այդ պահը, խիստ դառն էր ինծի համար և ան-
նկարագրելի անձկութիւն մը կը պաշարէր հոգիս, զորս
ո՛չ մէկ բան պիտի կրնար մեղմել:

Բարեկամս կ'աճապարէր մեկնելու, ինծի ալ նը-
շան ընելով:

Շանթահար եղած՝ հազիւ կրնայի գլխիկոր և հա-
մակերպած քայլերով, մօտենալ գեղեցիկ բարեկա-
մուհիս, հրաժեշտի վերջին սրտաղեղ ձեռնասեղմում
մը կատարելու համար:

Ոտքերս կը կթռտէին, վերջապէս սեղմեցի իր
թաւշանման ձեռքը, ու երբ՝ նայուածքով կը լսփէի
զայն՝ կարծես հոգիիս մէջ սիրոյ շանթ մը իջաւ,
գերազրգիւ տենդ մը վառելով հոն:

Մեկեցայ շոգեհուսէն խելայեղ՝ մինչ վերը,
բարձրավանդակին եզերքէն, բարեկամուհիիս թաշ-
կինակը կ'երերկէր այնքան շնորհալի կերպով:

Ինչե՛ր կ'զգար արդեօք այդ պաշտելի էակը . . .
կատարեալ գի՞նով մըն էի, արդէն՝ երբ Սամսո-
նէն ցամաք ելանք:

Մաքստանս առջևէն անցնելով օթել կը փու-
թայինք մինչ՝ բեռնակիրները կը շրջապատէին մեզ:

Փողոյններու մէջ տհազին բազմութիւն մը կ'եր-
թեւեկէր և ամէն վայրկեան կառքերու խուռ աղմուկն
էր որ լսելի կ'ըլլար:

Հլութեամբ կը հետեւէի բարեկամիս, որ խրոխտ
քայլերով կ'անցնէր մայթին վրայէն ուշադիր ակնար-
կը շորս կողմ պտտայնելով:

Օթել հասած և մեզի յատկացած սենեակին մէջ
տեղաւորուած էինք արգէն:

Բարեկամս գրպանէն յուշատետար հանելով նօթա-
գրութիւններ ըրաւ, որմէ վերջ վար կիջներ, պաղ
ջուրի լոգանք մը ընելու համար:

Իր գործելու մէթօտիկ եղանակը, իրաւամբ հիա-
ցումս կը գրաւէր:

Առողջութեանը այնքան հոգ տարած էր որ, նոյն
իսկ չէի համարձակեր իմինիս հետ բաղդատել զայն:

Ես՝ որ ընկճուածի, սրտանց ծերացածի մը երևոյ-
թըն ունէի:

Սենեակիս առանձնութեանը մէջ՝ ցաւագին մտա-
ծումներ ունեցայ, խորհրդածեցի իմ ալ անցեալիս
վրայ, ու բողբոսեցի մեր երկուքին ալ կեանքը,
բայց որքան տարբերութիւն Աստուած իմ:

Ան՝ խորհուրդի մարդ, միմիայն դատողութեան
պատուէրներուն կը հնազանդէր, իսկ ես զգացումի
էակ՝ անկանոն յուզումներու ենթակայ կեանքովս, ի-

րական գծբաղդութեան մը դատապարտեր էի ինքզինքս :

Մեր երկուքին տարբերութիւնը շատ աւելի ուշգրտու կը հանդիսանայ, մանաւանդ երբ նկատի կ'առնէի գեղեցիկ կնոջ հետ մեր յարաբերութիւնը . . . :

Ան կ'ազդէր իսկ ես կ'ազդուէի, ան կ'առաջնորդէր իսկ ես տեղի կուտայի . . . :

Հիմա մեր երկուքին ալ մտային ուղղութիւնը, կատարեալ ճշտութեամբ՝ կը պատկերանար մտքիս առջև, կ'ողբայի իմ սխալներուս վրան . . . :

Չէ՞ որ ան յաջող մարդ՝ իսկ ես վիժած մ'էի . . . : Բայց պէտք էր առիթէն օգտուիլ դարմանելու համար անցեալին աղէտալի հետքերը :

Այս մտածումները հեռո՞ւն տարած էին զիս, երբ գուրը բացուեցաւ ու բարեկամս ներս մտաւ, ժըպտագին երևոյթով մը :

Իր ակնարկը, իմ սխալներս ազդարարող և իր ընթացքին հետևելու լուռ հրաւէր մը չէ՞ր արդեօք :

Իրեն նայեցայ խանդոտատանքով և հաղորդեցի մտածումներս՝ կատարեալ անվերապահութեամբ :

Բարեկամս, կարեկցութեամբ խրախուսեց զիս, և վերջացուց՝

— Մի՛ յուսահատիր ըսելով :

Այս վերջին բառը, զոր շատ աշխուժիւ արտասանած էր, սարսուացուց հոգիս և հոն՝ զօրաւոր յոյս մը ճառագայթեցուց . . . :

Ճաշէ վերջ՝ պտոյտ մը առաջարկեց Գեղամ, բայց նախընտրեցի սենեակ մնալ, իր մեկնելէն վերջը, Պըլլուհին չքնաղ նկարը և անոր զսայելի գեղեցկութիւնը դարձեալ յափշտակեցին զիս . . . :

Ուղեղս կ'սկսէր թոցավառիլ, բռնկիլ :

Տկարութիւն մ'էր ասիկա՝ զոր չէի կրնար ո և է ե-

դանակով զապել :

Անկարողութենէս յուսահատած մեքենաբար բարեկամիս ըրածը յիշելով, պաղջուրի լոգանք մ'ալ ես առի, բայց՝ ով ուրախութիւն, յանկարծ անհունապէս կ'ազդուուեցան ջիղերս . . . :

Ասկէ պատուական ինչ զօրացուցիչ կրնար ըլլալ, ու մտածել թէ ի զուր տարիներով տառապած էի ջղային տկարութեամբ . . . :

Նոյն վարկեանին, մտքիս այդ խաղաղ տրամադրութիւններուն շնորհիւ՝ կեանքիս համար որոշ կանոն մը գծեցի հետևեալ եղանակով :

1. — Զիղերու կազդուում պտոյտներով, պաղջուրի լոգանքով և մարմնակրթանքով :
 2. — Զգացումները դատողութեան հպատակեցնելու որոշում :
 3. — Դատողութեան զարգացում, ամէն բան դիտելու և սյոզ արիւնով լուծելու առաջադրութեամբ :
 4. — Մտքի և զգացումներու ներդաշնակութիւն : Կարգ կանոնի և դասաւորութեան հետևելով :
- Այս չորս կանոնները այնքան կրկնեցի որ գոց սորված էի արդէն :

Հիմա չոգեհնաւին կիւր մշուշի մէջ պարուրուած հեռանկարի նման հաղիւ տարտամօրէն կը պատկերանար մտքիս :

Այս երկրորդ յաջողութենէս քաջալերուած՝ սենեակին մէջ կը քայլէի տենդոտ ջղայնութեամբ : Ուրախութենէս երգ մը կը մուլտայի քթիս տակէն՝ երբ բարեկամս ներս մտաւ :

Պահ մը կանգ առաւ, զիս դիտեց խոժոռ դէմքով ու յանկարծ սրտագին քրքիջ մը արձակեց :

Այդ վարկեանին, դէմքս անզգալաբար լուրջ կերպարանք մը առած էր, Գեղամ՝ որ յաջողած էր արդէն

մտածումներս կարգալ, պատմեց սենեակս մտած վարկեանին կրած տպաւորութիւնները, շնորհաւորեց զիս որոշումներուս համար և միտսին ճաշել գացինք:

Արեւ մարը մտնելու վրայ էր, բայց փողոցներու ոգևորութիւնը կը շարունակուէր տակաւին խօլ թափով:

Սալարկուած գետիններու վրայէն՝ թաւալող կառքերը խլացուցիչ ժխոր մը կը հանէին, մինչ երկսեռ բազմութիւն մը մայթերուն վրայէն կը յառաջանար փութկոտ քայլերով, դէմքերու և տարազներու զրւարճալի ցուցադրութիւն մը պարզելով:

Քալած ատեն՝ անյագօրէն կը դիտէի անցորդներուն արտայայտութիւնը. բայց տարօրինակ բան. ու մանք բնազդաբար համակրութիւն, իսկ ուրիշներ հակակրութիւն կ'ազդէին ինծի. և կարելի չէր ըլլար վերլուծել այս զգացողութիւններուն գաղտնիքը:

Բազմամբոս փողոցներէն անցնելով, հեռզհեռէ քաղաքին ձախ կողմէն կը յառաջանայինք: Շուկան Ռէժիի խողոր շէնքերը, կառավարական հսկայ սալաւաք, հրատարակին աշտարակաւոր ժամացոյցը և Յունաց գեղակերտ եկեղեցին այցելել վերջ՝ կ'ուզողուէինք կողմնակի փողոց մը ուր՝ այնքան լուսութիւն և ամալութիւն կը տիրէր. ուր մեր ներկայութիւնը իսկ՝ ցորեկ ատեն կասկածներու տեղի պիտի տար:

Բարեկամս ժամացոյցը հանելով՝ օթել դառնանք ըսաւ, առանց ինծի նայելու:

Մեքենաբար այս խօսքերուն հնադանդեցայ և միտսին քայլերնիս դէպի ծովեզերք ուղեօինք, ճիշտ այդ վայրկեանին, սակայն, բանականութիւնս ընդվզում մը ունեցաւ էութեանս մէջ:

Ինչո՞ւ բնազդաբար համակերպէի առանց խորհրդածութեան, այսպէս մտածելով օթել հասանք:

Մութը կոխած էր արդէն, մօտակայ պատահաններէն ցոլացած լոյսը՝ մինչև փողոց կ'երկարաձգուէր և դիմացի պատերուն վրայ սողակելով՝ լուսաւոր հետքեր կը թողուր. աճապարանքով առանց ետիս դառնալու սանդուխներէն չորսական աստիճան վեր ելլելով՝ առանձին սենեակ հասայ, ու աթոռն պատուհանին մօտեցնելով՝ նայուածքս հորիզոնին մթութեան մէջ խորասուզեցի:

Իուրսի լուսթան մէջէն գմայլելի նուագածութիւն մը լսելի կ'ըլլար, ու երգի մը ներդաշնակ ելեէջները մինչև ինծի կը հասնէին, այնպէս կը թուէր թէ, երկսեռ խմբակ մը ջութակով և դաշնակի ընկերակցութեամբ Շուսէրթի ցայգերգներէն մէկը կ'երգէր:

Այս եղանակը որ ուսանողական օրերէս ի վեր ինծի ծանօթ էր, հոգիիս մէջ՝ բուռն յուզումներ արթնցուց, խանդավառութենէս միտքս գործելէ դադրած կը թուէր ու այս սլոցիկ վերացումիս մէջ՝ տարօրինակ զգացողութիւններու կը մատնուէի:

Ուսանողական կեանքիս յիշատակները հեռաւոր անցեալի մը տարրոամ գիծերով՝ կը ներկայանային այժմ մտքիս առջև:

Իուրսը տիրող մթութիւնը և վողոցին լուսթիւնը, ալ աւելի զգուշ կ'ընէին հեռուէն եկող երաժշտութեան հմայքը. իսկ ցայգերգին խորհրդաւոր ելեէջներն և մեղմօրօր շեշտը՝ որոնք այնքան նրբութեամբ կ'արտայայտուէին՝ միտքս ալիքներու վրայ տատանող մշուշին նման կ'օրօրէին . . .

Երաժշտութիւնը դադրեցաւ. բայց նոյն վայրկեանին՝ կառք մը անցաւ խլացուցիչ ժխորովը, խանգարելով իմ սիրական վայելքս:

Անբացատրելի զգացողութիւններու մատնուած էի ոչ կրնայի խորհիլ և ոչ ալ դիտել. տեսակ մը թմրու-

Թիւն կամ հոգեկան ծուլութիւն գրաւած ըլլալով հոգիս. բայց հակառակ ջլատումիս՝ փորձեցի վերլուծուած մը կատարել մտային վիճակիս նկատմամբ, դիտեցի որ երաժշտութիւնն էր բուն պատասխանատուն զիս տկարացնելու տեսակէտով:

Այդ օրէն ի վեր որոշեցի գեղեցկագիտական կամ գեղարուեստական հակումներս չափաւորել, անոնց տեղ մշակելով դատողութիւնը . . . :

Բաց պատուհանէն խոնար. օդի հոսանք մը ներս կը խուժէր, շտապով ոտքի ելայ գոցելու համար զայն, ու հազիւ ետիս դարձած՝ տարօրինակ տեսարան մը պարզուեցաւ աչքիս առջև:

Ջարմանայի բան, կը կրկնէի իւրովի, բարեկամս երկու աթոռներու վրայ տարածուած՝ սենեակին մէջ տեղը կը քնանար կամ անշունչ, անկենդան փռուած կը մնար:

Արդեօք կաթուածահա՞ր եղած էր, կակսէի մտահոգութեան մատնուիլ, բացարձակապէս անշարժ ջլապինդ բազուկներովը՝ ուղղաձիգ դիրք մը առած էր անդամալոյծի նման, կասկածի և սարսափի խառն վրդովումով իրեն մօտեցայ, ցնցեցի թեւը և յուսահատութենէս աղաղակ մը թռցնելու վրայ էի, երբ բարեկամս աչքերը քթթելով՝ ժպտեցաւ ինձի, իր տարօրինակ ձպխտովը՝ որ ամէն բան կը հասկցնէր:

Ս. Վ. Բ. Ա. ՀԱՏՈՐԻ

Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն



Ճամբորդութիւնը պիտի շարունակուի մինչեւ Մարտիան. Անասեայ, Թօզաս եւ Սվազ, իսկ յառաջիկային հրասարակէջի հասրոներ պիտի ըլլան:

Բ. — Դիմագիտութիւն. շահեկան փորձերով համեմուած:

Գ. — Կարգ մը սարօրինակ կիներու եւ այրերու հոգեբանութիւնը:



1794



1794

1794

1794


1794

1794

1794

1794

1794



2617-2620

8 n.

« Ազգային գրադարան



NL0066406

« Ազգային գրադարան



NL0066405

« Ազգային գրադարան



NL0066404

201 Ճ

« Ազգային գրադարան



NL0066403

